ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

5 (74)

ԵՐԵՎԱՆ

2016

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 5 (74), 2016

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Վահագն Ագլյան
Վարդան Աթոյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Աննա Ժամակոչյան
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Վահրամ Հովյան
Տիգրան Ղանալանյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 5 (74), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հրայր Փաշայան
Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականությունը 5

Հայկ Գաբրիելյան
Թուրքիայի արտաքին քաղաքականությունը …..... 10

Անուշավան Բարսեղյան
Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը …..... 18

Զոնի Մելիքյան
Վրաստանի արտաքին քաղաքականությունը …..... 25

Ռոման Կարապետյան
Իրանի արտաքին քաղաքականությունը 32

Հայկ Գաբրիելյան
Թուրքիա-Իսրայել. նոր ժամանակաշրջան …..... 39

Կարեն Վերանյան
Ադրբեջան-Իսրայել ռազմատեխնիկական համագործակցության շուրջ 51

Հուշագիր հեղինակին 68

Տարածաշրջան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2016թ. հունիս

Հրայր Փաշայան*

Ղարաբաղյան հակամարտություն. Հունիսին առավել ակտիվությամբ շարունակվեցին մայիսին վերսկսված՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված դիվանագիտական քայլերը: Ամսվա սկզբին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովը (Ռուսաստան), Ջեյմս Ուորլիքը (ԱՄՆ) և Պիեռ Անդրյոն (Ֆրանսիա) մայիսի 31-ին Ադրբեջանի, հունիսի 2-ին Հայաստանի արտգործնախարարների հետ հանդիպումների արդյունքներով հայտարարություն տարածեցին, որի մեջ ասվում է, որ հանդիպումներում քննարկվել է մայիսի 16-ին Վիեննայի գագաթաժողովում ընդունված որոշումների իրագործման հարցը: Նախարարները հաստատել են նախագահների համաձայնությունը՝ հունիսին անցկացնել հանդիպումների հաջորդ փուլը՝ նպատակ ունենալով վերսկսել բանակցությունները համապարփակ կարգավորման շուրջ:

Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպման նախաձեռնությամբ հանդես եկավ Ռուսաստանի Դաշնությունը: Հունիսի 20-ին Սանկտ Պետերբուրգում կայացավ Սերժ Սարգսյանի, Վլադիմիր Պուտինի և Իլհամ Ալիևի եռակողմ հանդիպումը, որի արդյունքներով ընդունվեց համատեղ հայտարարություն: Փաստաթղթում, մասնավորապես, վերահաստատվում էր կողմերի հավատարմությունը մայիսի 16-ին կայացած հայ-ադրբեջանական գագաթաժողովի պայմանավորվածություններին՝ ուղղված հակամարտության գոտում իրավիճակի կայունացմանը և խաղաղ գործընթացի առաջընթացին նպաստող մթնոլորտի ստեղծմանը:

---

* Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, ք.գ.թ.:

Ինչպես սպասելի էր, այս անգամ ևս հակամարտության կարգավորման գործընթացում ճեղքում տեղի չունեցավ: Հանդիպման առանցքային հարցը, ըստ էության, նոր պատերազմի վերսկսում թույլ չտալու, իսկ հեռանկարում՝ հիմնախնդրի քաղաքական կարգավորման շուրջ նախապայմանների ստեղծումն էր: Սակայն հանդիպումից հետո ԱՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ն.Մամեդովը հայտարարեց, թե հանդիպմանը պայմանավորվածություն է ձեռք բերվել հիմնախնդիրը լուծել փուլային եղանակով: «Այսինքն՝ նախ հայկական կողմը հանձնում է հինգ շրջանները, ապա՝ ևս երկու շրջան, և միջանցք է բացվում, այնուհետև որոշվում է Ղարաբաղի կարգավիճակի հարցը»,- նշել է նա: Ն.Մամեդովի հայտարարությունն «անբարեխիղճ է և խեղաթյուրված»: Դա փորձ է ադրբեջանական կողմից՝ յուրովի մեկնաբանել այն պայմանավորվածությունները, որոնց հասել են կողմերը, հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մ.Զախարովան հունիսի 23-ի ճեպազրույցում:

Պաշտոնական Ստեփանակերտի դիրքորոշումը ներկայացրեց ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, տեղեկատվության գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանը՝ նշելով, որ Արցախում խնդրի փուլային լուծմանը միայն մեկ դեպքում կհամաձայնեն՝ եթե սկզբում ճանաչեն ԼՂՀ անկախությունը: Տարածքների հանձնման հարցի վերաբերյալ Դավիթ Բաբայանը նշեց. «Ես կարծում եմ, որ դա հնարավոր չէ, որովհետև բոլորի համար էլ պարզ է, թե մենք ում հետ գործ ունենք: Հիմնախնդիրն այնպես պետք է կարգավորվի, որ հետագայում գայթակղություն չլինի՝ նորից հարցը կարգավորել ուժային տարբերակով»:

Շարունակելով ապակառուցողական քաղաքականությունը՝ Ի.Ալիևը հունիսի 25-ին հայտարարեց, որ միջադեպերի հետաքննության մեխանիզմի կիրառման որևէ անհրաժեշտություն չկա: Եթե դրա տակ հասկացվում են հակամարտության «սառեցումը» և շփման գծում ինչ-որ լրացուցիչ միջոցների ձեռնարկումը, Ադրբեջանն, իհարկե, չի գնա այդ քայլին: Ինչ վերաբերում է բուն հակամարտության կարգավորմանը, ապա, ըստ ԱՀ նախագահի, հարցը պետք է կարգավորվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակում:

Արցախ-Բելգիա. ԼՂՀ արտաքին քաղաքական կյանքում տեղի ունեցած իրադարձություններից կարևորությամբ անհրաժեշտ է առանձնացնել երկրի բարձրաստիճան պաշտոնյաների՝ Բելգիայի Թագավորություն կատարած այցելությունը: Նման հանդիպումները կարևոր են Ղարաբաղյան հակամար-

տության էությունը միջազգային հանրությանը ներկայացնելու, Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացի և ԼՂՀ իշխանությունների նախաձեռնողական գործունեության տեսանկյունից:

Այս համատեքստում, հունիսի 7-11-ին կայացավ ԼՂՀ նախագահի գլխավորած պատվիրակության աշխատանքային այցը Բելգիայի Թագավորություն: Հունիսի 8-ին Բրյուսելում Բակո Սահակյանը հանդիպել է Բելգիայի խորհրդարանում Հայաստանի հետ բարեկամության խմբի ղեկավար Էլս վան Հոֆի, հունիսի 9-ին՝ Բրյուսելի Ֆլամանդական խորհրդարանի մի խումբ պատգամավորների հետ՝ խորհրդարանի նախագահ Յան Պյումանսի գլխավորությամբ, հունիսի 10-ին՝ Բրյուսելի ֆրանկֆոն խորհրդարանի պատգամավորների հետ՝ նախագահ Ժուլի դե Գրոտի գլխավորությամբ: Քննարկումների առանցքում երկու երկրների խորհրդարանների միջև կապերի զարգացմանն առնչվող հարցերն էին: Նախագահը նշել է, որ Արցախը պատրաստակամ է զարգացնել այդ հարաբերությունները և ակնկալում է հայ ժողովրդի բարեկամների գործուն աջակցությունը:

Այնուհետև Արցախի նախագահը *«Fondation Universitaire»* կազմակերպությունում հանդիպում է ունեցել Բելգիայի ակադեմիական շրջանակների հետ, անդրադարձել Արցախի պետականաշինությանը, ներքին և արտաքին քաղաքականությանը, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությանն ու տարածաշրջանային գործընթացներին: Բակո Սահակյանի վերջին կանգառը Բելգիայի Մեխելեն քաղաքն էր, որտեղ նա հանդիպել է քաղաքապետ Բարտ Զոմերսի, փոխքաղաքապետ Մարկ Հենդրիքսի և այլ պաշտոնյաների հետ: Ամփոփելով Բելգիա այցելությունը՝ նախագահն արդյունավետ է համարել տեղի ունեցած հանդիպումներն ու ձեռք բերված պայմանավորվածությունները՝ նշելով, որ դրանք ունեն խոստումնալից հեռանկարներ և փոխշահավետ համագործակցության լավ նախադրյալներ:

Հունիսի 16-ին մեկնարկեց ԼՂՀ արտգործնախարարի աշխատանքային այցը Դանիայի Թագավորություն: Կ.Միրզոյանը հանդիպումներ ունեցավ քաղաքական տարբեր շրջանակների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում անդրադարձ կատարվեց ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ստեղծված արդի իրավիճակին, մասնավորապես՝ ապրիլի սկզբին Ադրբեջանի սանձազերծած ռազմական արկածախնդրության համատեքստում: Մտքեր փոխանակվեցին տարածաշրջանային ան-

վտանգությանն առնչվող մի շարք հարցերի շուրջ: Նախարարը ներկայացրեց նաև Արցախում տեղի ունեցող պետականաշինության գործընթացը և ազատ ու ժողովրդավարական հասարակության ձևավորման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

Հայաստան-Արցախ. Հայկական զույգ պետությունների միջև ակտիվ փոխգործակցությունը շարունակվել է: Արցախ են այցելել ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանը, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գևորգյանը, քաղաքական գործիչներ: ԼՂՀ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել է երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ: Ըստ ոլորտների՝ ՀՀ և ԱՀ համապատասխան նախարարությունների միջև ստորագրվել են հարաբերությունների խորացման և գործնական պայմանավորվածությունների կատարման վերաբերյալ համաձայնագրեր:

Հայկական երկու հանրապետությունների փոխհամագործակցության ծրագրի շրջանակում հունիսի 22-ին աշխատանքային այցով Արցախ ժամանած ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի ուղեկցությամբ, այցելել է ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտ զորքերի սահմանագծի հարավային ուղղությամբ տեղակայված մարտական հենակետեր, շփվել տեղի հրամանատարության ու զինծառայողների հետ: Այնուհետև Պաշտպանության բանակի շտաբում տեղի է ունեցել հանդիպում բարձրաստիճան հրամկազմի ներկայացուցիչների հետ, զեկույցով հանդես է եկել ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը: Զեկույցում նա մանրակրկիտ ներկայացրել է ապրիլյան մարտական գործողություններից հետո ստեղծված օպերատիվ-մարտավարական իրադրությունը, առաջնագծում կատարված և կատարվող ինժեներ-ական ու ամրաշինական աշխատանքների ընթացքը և անդրադարձել բանակաշինության ոլորտում իրականացվող այլ գործընթացների:

ԼՂՀ-Սփյուռք. Ապրիլյան իրադարձություններից հետո համայն հայության՝ Արցախին օգնություն ցուցաբերելու գործընթացը շարունակվել է: Սփյուռքի հետ հարաբերությունների զարգացումը շարունակվել է ոչ միայն տարբեր հասարակական-քաղաքական գործիչների ու բարեգործների Ար-

ցախ այցելությամբ, այլև տեղի են ունեցել ԼՂՀ բարձրաստիճան այրերի այցելություններ Սփյուռքի մի շարք հայկական համայնքներ:

Հունիսի 2-ին տեղի ունեցավ ԼՂՀ վարչապետի աշխատանքային այցը Շվեյցարիա: Արայիկ Հարությունյանը հանդիպումներ է ունեցել Ժնևի հայկական համայնքների ներկայացուցիչների, ինչպես նաև տեղի մի խումբ գործարարների հետ: Կառավարության ղեկավարը հակիրճ ներկայացրել է Արցախի պետականաշինության և տնտեսության զարգացման ընթացքը, բարձր գնահատել սփյուռքի դերակատարությունը:

Արցախի Հանրապետության նախագահը հունիսի 3-ին ընդունեց Արցախ ժամանած մի խումբ հայ բարերարների (Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյան, սփյուռքահայ բարերարներ Հայկ Մաղաքելյան և Վահե Կարապետյան, «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի նախագահ Կարո Արմեն և նույն կազմակերպության տնօրենների խորհրդի խորհրդական, ՀՀ-ում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Էվանս): Քննարկվել են Հայրենիք-Սփյուռք, եկեղեցի-պետություն կապերին և Արցախում մի շարք ծրագրերի իրականացմանն առնչվող հարցեր: Բակո Սահակյանը նշել է, որ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը մեր պետականաշինության հիմնասյուներից մեկն է՝ հավելելով, որ Սփյուռքի ներկայությունը մեր հանրապետության կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում ակնառու է: Հունիսի 7-11-ին աշխատանքային այցով Բելգիայի Թագավորությունում գտնվող ԼՂՀ նախագահը Բրյուսելում, Հայ դատի գրասենյակում, հանդիպում է ունեցել ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի անդամների հետ՝ կառույցի ղեկավար Կասպար Կարապետյանի գլխավորությամբ: Բակո Սահակյանն արժևորել է ՀՅԴ Հայ դատի գործունեությունը համահայկական նշանակություն ունեցող խնդիրների լուծման և Արցախին մշտապես սատարելու ուղղությամբ՝ նշելով, որ դրա շնորհիվ բազմաթիվ կարևոր հարցեր ստանում են արդյունավետ լուծում:

ԹՈՒՐՔԻԱՅԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. հունիս

Հայկ Գաբրիելյան[*]

Ռուսաստան–Թուրքիա. Հունիսին Ռուսաստանը և Թուրքիան փոխադարձաբար միմյանցից ապացույցներ պահանջեցին ահաբեկչությանն աջակցելու համար: Թուրքիան Ռուսաստանից պահանջեց ապացուցել, որ զենք է մատակարարում ԻՊ-ին, Ռուսաստանը Թուրքիայից պահանջեց ապացուցել *ՊԿԿ*-ին զենք մատակարարելու փաստը: Ռուսաստանը դիմեց ՄԱԿ-ին՝ խնդրելով ստուգել սիրիական տարածքում Թուրքիայի կողմից ամրություններ կառուցելու մասին տեղեկատվությունը: ՌԴ ՊՆ-ն հայտարարեց, թե զինյալներն անարգել հատում են թուրք-սիրիական սահմանը և ներթափանցում Հալեպի նահանգ: Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուն հայտարարեց, որ Ուկրաինայի, Վրաստանի, Սևծովյան, Արևելամիջերկրածովյան տարածաշրջանների և Սիրիայի հանդեպ Ռուսաստանի ագրեսիվ դիրքորոշումը լուրջ սպառնալիք է տարածաշրջանի կայունության և անվտանգության համար: Թուրքիայի ԱԳՆ-ն Սիրիայի նախագահ Բաշար Ասադին և ռուսական ավիացիային մեղադրեց Հալեպում հիվանդանոցներ ավերելու համար, իսկ ՌԴ ԱԳՆ-ն Թուրքիային մեղադրեց թիկունքից Սիրիայի կառավարական զորքերին հարվածելու համար՝ հայտարարելով, որ զինյալների հոսքը թուրք-սիրիական սահմանով չի նպաստում Սիրիայում իրավիճակի կարգավորմանը: Թուրքիայի պաշտպանության նախարար Ֆիքրի Ըշըքը Բրյուսելում հայտարարեց, որ իր երկիրը թույլ չի տա, որ Սև ծովը վերածվի ռուսական լճի՝ հիշեցնելով, որ ավելի վաղ այս միտքը հնչեցրել է Էրդողանը:

Հունիսի կեսին Էրդողանը նամակ հղեց Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին, որում ռուսաստանցիներին շնորհավորեց Ռուսաստանի օրվա (հունիսի 12) կապակցությամբ և ցանկություն հայտնեց, որ Մոսկվայի ու Անկարայի հարաբերությունները դուրս գան «արժանի մակարդակ»: Թուր-

[*] Թուրքագետ:

քիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմն իր հերթին Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդևին հղած նամակում հույս հայտնեց, որ առաջիկայում երկու երկրների հարաբերություններն ու համագործակցությունը կհասնեն այն մակարդակի, որն անհրաժեշտ է երկու ժողովուրդների ընդհանուր շահերի համար: Ռուսաստանի նախագահի մամլո քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտարարեց, որ Պուտինին Էրդողանի նամակ հղելն ավանդական արձանագրային ուղերձ է, որը չի պահանջում պատասխան: Մոսկվան կցանկանար կարգավորել հարաբերություններն Անկարայի հետ, սակայն Պուտինը հստակ հասկացրել է, որ դա անհնար է, առանց Թուրքիայի կողմից մի շարք գործողությունների կատարման, ասել է Պեսկովը: Ըստ ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովայի՝ Թուրքիան չի արձագանքում երկկողմ հարաբերությունների կարգավորմանն անհրաժեշտ պահանջների կատարմանը, և որ Սև ծովի վերաբերյալ Անկարայի նման հայտարարությունները չեն նպաստում Ռուսաստանի ու Թուրքիայի երկկողմ հարաբերությունների կարգավորմանն ու տարածաշրջանի կայունությանը:

Հունիսին Չավուշօղլուն հրավիրվեց Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀԿ) արտգործնախարարների խորհրդի նիստին (Սոչի), ինչի կապակցությամբ Զախարովան հայտարարեց, որ Չավուշօղլուին հրավիրելը Ռուսաստանի պարտականությունն էր՝ որպես կազմակերպիչ: Հունիսի 27-ին Պեսկովը հայտարարեց, թե Էրդողանը նոր նամակ է հղել Պուտինին, որում առկա է «ներողություն» բառը: Կրեմլի կայքում տեղ գտած հայտարարությունում նշված էր, որ Էրդողանն ուղերձում խորին ափսոսանք է հայտնում ռուսական «Սու-24»-ի օդաչու Օլեգ Պեշկովի զոհվելու կապակցությամբ և ասում է «ներեցեք»: Թուրքական մամուլը գրեց, որ Էրդողանը միայն ափսոսանք է հայտնել և ոչ թե ներողություն է խնդրել: Ապա այդ մասին հայտարարեցին Էրդողանի մամլո քարտուղար Իբրահիմ Քալընը և հենց ինքը՝ Էրդողանը: Ամեն դեպքում անգամ ռուսական պաշտոնական հայտարարություններում գրված չէր, որ Էրդողանը ներողություն է խնդրել «Սու-24»-ը կործանելու համար, ինչը գլխավոր հարցն է, իսկ մնացյալը (օդաչուի զոհվելը և այլն) ածանցյալ է: Ամփոփելով նշենք, որ թուրքական մամուլի համաձայն՝ Էրդողանը ներողություն չի խնդրել, միայն ափսոսանք է հայտնել, իսկ ռուսական մամուլի համաձայն՝ ստացվում է, որ Էրդողանը կա՛մ ներողություն է խնդրել Պեշկովի զոհվելու համար, կա՛մ էլ պարզապես անհաս-

ցե ներողություն է խնդրել, հայտնի չէ, թե ինչի համար: Անգամ հաստատված չէ, որ Պեշկովին սպանել է Թուրքիայի քաղաքացի, զինյալ Ալփարսլան Չելիքը, որի նկատմամբ Թուրքիայում հարուցված են մի քանի քրեական գործեր:

Նման խառնաշփոթ է նաև Ռուսաստանի ներկայացրած երկրորդ նախապայմանի հարցում՝ փոխհատուցում վճարել: Բինալի Յըլդըրըմը նախ հայտարարեց, թե Թուրքիան պատրաստ է անհրաժեշտության դեպքում դիտարկել փոխհատուցում վճարելու հարցը (բնականաբար, դա դեռ չէր նշանակում, թե Թուրքիան կգնա այդ քայլին: Հասկանալի էր, որ դա կախված կլինի նաև նրանից, թե դրա դիմաց ինչ զիջման է պատրաստ ռուսական կողմը): Ռուսական մամուլն այս կապակցությամբ անմիջապես գրեց, թե Թուրքիան «փոխհատուցում է վճարելու «Սու-24»-ը կործանելու համար»: Դրանից հետո Իբրահիմ Քալընը հայտարարեց, որ թուրքական իշխանությունները պատրաստ են դիտարկել զոհված ռուս օդաչուի ընտանիքին (բայց ոչ «Սու-24»-ը կործանելու համար) փոխհատուցում վճարելու հնարավորությունը:

Հստակություն չկա նաև Ռուսաստանի ներկայացրած երրորդ նախապայմանի (մեղավորների պատժում) հարցում: Անհասկանալի է, թե կոնկրետ ինչ է պահանջում Ռուսաստանը, արդյոք նա պատրա՞ստ է բավարարվել նրանով, որ Ալփարսլան Չելիքին ենթադրաբար ազատազրկման կդատապարտեն Թուրքիայում՝ մեղավոր ճանաչելով Օլեգ Պեշկովին սպանելու համար: Միգուցե Ռուսաստանը պահանջում է պատժել «Սու-24»-ի խոցման մեղավորներին, պատասխանատուներին: Հայտնի է, որ 2015թ. նոյեմբերի 24-ին «Սու-24»-ի խոցումից հետո Թուրքիայի վարչապետ Ահմեթ Դավութօղլուն հայտարարել էր, թե անձամբ ինքն է հրաման տվել հարվածել սահմանախախտ ինքնաթիռը (Թուրքիայի Սահմանադրության 117-րդ հոդվածի համաձայն՝ այդ երկրի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետն իր գործունեության ժամանակ հաշվետու է վարչապետին): Անհասկանալի է մնում, թե արդյոք Ռուսաստանը ձգտում է հասնել Դավութօղլուին կամ էլ, ասենք, ռազմաօդային ուժերի հրամանատարին պատժելուն:

Հետագա իրադարձությունները կարծես թե գալիս են տալու բոլոր հարցերի պատասխանները: Էրդողանի անհասցե ներողությունից հետո ռուս և թուրք գործիչները հայտարարեցին հարաբերությունների կարգավորման գործընթացի մեկնարկի մասին: Դրանից հետո Պուտինն ու Էրդողանը մոտ 40 րոպեանոց հեռախոսազրույց ունեցան, որի ժամանակ պայմանավորվեցին

առանձին հանդիպման շուրջ, որը կարող է տեղի ունենալ օգոստոսին Սոչիում կամ սեպտեմբերի սկզբին Չինաստանում, G20 գագաթաժողովի շրջանակում: Պուտինն ու Մեդվեդևը Թուրքիային ցավակցեցին Ստամբուլում Աթաթուրքի օդանավակայանում կատարված ահաբեկչության համար: Ապա Պուտինը Ռուսաստանի կառավարությանը հրահանգեց վերացնել դեպի Թուրքիա զբոսաշրջային արգելքը և պատրաստվել առևտրատնտեսական հարաբերությունների կարգավորմանը: Պեսկովը հայտարարեց, որ դեռ վաղ է խոսել «Թուրքական հոսք» գազատարի նախագծի վերականգնման մասին: Չավուշօղլուն Սոչիում Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ զբոսաշրջային ոլորտի սահմանափակումների վերացումը շատ կարևոր է իրենց համար, որ հարաբերությունների վատթարացումից առաջին հերթին տուժել են երկու ժողովուրդները, ապրանքաշրջանառության ծավալը կհասցվի $100 մլրդ-ի: Անկարան շարունակելու է սիրիական ճգնաժամի հարցում Մոսկվայի հետ դիրքորոշման մերձեցման կուրսը:

ԱՄՆ–Թուրքիա. Շարունակվեց քրդական գործոնի պատճառով ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև առկա լարվածությունը: Բինալի Յըլդըրըմը, մեկնաբանելով Մարդին նահանգում *PKK*-ի մոտ ամերիկյան հակատանկային հրթիռների հայտնաբերումը, հայտարարեց, որ դա հակասում է Անկարայի և Վաշինգտոնի դաշնակցային հարաբերություններին. «Անկասկած, դա հակասում է դաշնակցային սկզբունքներին: Կարո՞ղ են մեր ռազմավարական գործընկերներն աջակցել ահաբեկչական կազմակերպություններին: Չեմ ուզում նույնիսկ մտածել, որ դա հնարավոր է»:

ԱՄՆ պետդեպարտամենտը հրապարակեց ահաբեկչության մասին տարեկան զեկույցը, որի՝ Թուրքիային առնչվող մասում ահաբեկչական կազմակերպություններ են ճանաչվել *PKK*-ն (Քրդստանի աշխատավորական կուսակցություն), *TAK*-ը (Քրդստանի ազատագրման արծիվներ), *DHKP-C*-ն (Հեղափոխական ժողովրդական ազատագրական կուսակցության ճակատ), *MLKP*-ը (Մարքսիստ-լենինիստական կոմունիստական կուսակցություն), ինչպես նաև ԻՊ-ը: Զեկույցում տեղ չեն գտել Սիրիայի քրդերի Դեմոկրատական միություն կուսակցությունը (*PYD*) և նրա ռազմական թև *YPG*-ը (Ժողովրդի ինքնապաշտպանական ուժեր): Մինչդեռ Թուրքիայի իշխանությունները *PYD*-ը համարում են «*PKK* սիրիական թև և ահաբեկչական կազմակերպություն»:

Չավուշօղլուն *YPG*-ի՝ Եփրատ գետի արևմտյան ափն անցնելու կապակցությամբ հայտարարեց, որ ԱՄՆ-ը Թուրքիային երաշխիք էր տվել, թե *YPG*-ը չի հայտնվի Եփրատն անցած ուժերի թվում: Ավելի վաղ Թուրքիայի ԱԱԽ նիստում որոշվել էր Սիրիայի քրդերի համար «կարմիր գիծ» սահմանել հենց Եփրատի արևմտյան ափը, և երբ դրանից հետո Սիրիայի քրդերը փորձել էին անցնել Եփրատ գետի արևմտյան ափը, Թուրքիայի ՌՕՈ F-16 կործանիչները հարվածել էին նրանց նավակներին: Ֆիքրի Ըշըքը Բրյուսելում հայտարարեց, թե Թուրքիան ակնկալում է, որ ԱՄՆ-ը հաշվի կառնի իր համար հարցի զգայունությունը և *PYD*-ին ու *YPG*-ին կվերաբերվի նույն կերպ, ինչպես *PKK* պարագայում է:

Թուրքական մամուլը գրեց, որ ԱՄՆ-ը չի կատարել թուրք-սիրիական սահմանին *HIMARS* համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր (ՀԿՌՀ) տեղակայելու մասին իր խոստումը: Դրա համար էլ Թուրքիան որոշել է յուրովի պատասխան տալ դրան և Սիրիայի սահմանի մոտ տեղակայել *Kasırga-TRG*/300 ՀԿՌՀ-ներ, որոնց հեռահարությունը կազմում է 130 կմ, մինչդեռ *HIMARS*-ինը առավելագույնը 90 կմ է:

ԱՄՆ պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Մարկ Թոները, հույն թղթակցի հետ զրույցում մեկնաբանելով մուսուլմանների սրբազան Ռամադան ամսին Սուրբ Սոֆիայի տաճարում Ղուրան կարդալու թուրքական իշխանությունների որոշումը, հայտարարեց, որ Թուրքիան պետք է հարգի Սուրբ Սոֆիայի տաճարի ավանդույթները, որը բացառիկ նշանակության վայր է: Հունիսին Էրդողանն Օբամային ցավակցեց Օռլանդոյի ահաբեկչության, Օբաման Էրդողանին ցավակցեց Ստամբուլի ահաբեկչության համար: Օբաման ողջունեց նաև Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ Թուրքիայի ջանքերը:

Էրդողանը հայտարարեց, որ հիասթափվել է ԱՄՆ-ի հետ հարաբերությունների զարգացումից, երբ այդ երկրի նախագահ դարձավ Բարաք Օբաման. «Մենք հույսեր էինք փայփայում, երբ նախագահ դառնալուց հետո Օբաման, որպես իր առաջին արտասահմանյան այցի վայր, ընտրեց Թուրքիան: Դժբախտաբար, մեր սպասելիքները չարդարացան, և վատթարացավ երկու երկրների արտաքին քաղաքական ու տնտեսական փոխգործակցությունը»:

Էրդողանն այցելեց ԱՄՆ՝ ներկա գտնվելու համար աշխարհահռչակ բռնցքամարտիկ Մուհամեդ Ալիի հուղարկավորությանը: Նրա թիմը հանդես է

եկել հուղարկավորության արարողության հետ կապված առաջարկներով, սակայն միջոցառման կազմակերպիչները մերժեցին դրանք և չեղյալ հայտարարեցին Էրդողանի ելույթը: Դրանից հետո նա կիսատ թողեց այցը, մեկ օր շուտ վերադարձավ Թուրքիա՝ ներկա չգտնվելով հուղարկավորության գործընթացին:

ԱՄՆ դաշնային դատարանը հրաժարվեց գրավի դիմաց ազատ արձակել իրանական ծագմամբ թուրք գործարար Ռեզա Զարաբին, որն ԱՄՆ-ում մեղադրվում է փողերի լվացման, ֆինանսական մեքենայությունների և Իրանի դեմ սահմանված պատժամիջոցները շրջանցելու համար: Ռեզա Զարաբը 2013թ. դեկտեմբերին Թուրքիան ցնցած «Մեծ կաշառք» գործի առանցքային ֆիգուրն է: Այս գործի հետ կապված՝ հարկադրված հրաժարական է տվել 4 նախարար, այդ թվում նաև Թուրքիայի՝ ԵՄ հարցերով նախկին նախարար Էգեմեն Բաղըշը, որն այժմ կարող է կալանավորվել ԱՄՆ տարածքում հայտնվելու դեպքում: Համարվում է, որ Զարաբը շատ բաներից է տեղյակ և կարող է տեղեկություններ հաղորդել Թուրքիայի նախագահի ու նրա որդու՝ Բիլալ Էրդողանի մութ գործերի մասին:

ԵՄ–Թուրքիա. Հունիսին ԵՄ-ը և Թուրքիան բանակցային նոր գլուխ բացեցին ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացի շրջանակներում, որը 16-րդն էր: Խոսքը «Ֆինանսներ և բյուջե» 33-րդ բանակցային գլխի մասին է: Թուրքիայի ֆինանսների նախարար Նաջի Աղբալը հայտարարեց, որ Թուրքիան հեշտությամբ կկատարի այդ գլխով նախատեսված պահանջները՝ ընդգծելով, որ մաքսային ծառայությունը, հարկերը, ֆինանսական վերահսկողությունն ու վիճակագրությունն օրենսդրորեն գրեթե ամբողջովին համապատասխանում են ԵՄ նորմերին: Բացի այդ, կողմերը համաձայնագիր ստորագրեցին ահաբեկիչների և նրանց ֆինանսավորող անձանց արտահանձնման մասին:

ԵՄ-ի կողմից Թուրքիայի քաղաքացիների համար վիզային ռեժիմի վերացման հարցում առաջընթաց չգրանցվեց: Էրդողանը հայտարարեց, որ հավատում է դրական արդյունքների գրանցմանը: ԵՄ ներգաղթի և քաղաքացիության հարցերով եվրահանձնակատար Դիմիտրիոս Ավրամոպուլոսը Բրյուսելում հայտարարեց, որ Թուրքիան մինչ այժմ չի կատարել վիզային ռեժիմը վերացնելու համար ԵՄ 72 պահանջից 7-ը (կատարվել է 72 պահանջից 65-ը): Սակայն Բինալի Յըլդըրըմը հայտարարեց, որ Թուրքիայի հակաահաբեկչական օրենքները երբեք չեն փոխվի, անգամ եթե դա բացասաբար անդրադառնա ԵՄ-ի կողմից վիզային ռեժիմի վերացման վրա:

Հրաժարական տվեց Թուրքիայում ԵՄ դեսպան Հանսյորգ Հաբերը, որը նախորդ ամիս կանչվել էր Թուրքիայի ԱԳՆ՝ ԵՄ-Թուրքիա միգրացիոն համաձայնագիրը դատապարտելու համար: Էրդողանը, մեկնաբանելով Մեծ Բրիտանիայի վարչապետ Դևիդ Քեմերոնի այն հայտարարությունը, թե ներկայիս տեմպերով Թուրքիան ԵՄ-ին կանդամակցի 3000թ. ոչ շուտ, հայտարարեց. «Թող ոչ ոք չստուգի մեր համբերությունը: Գործընթացը սկսվել է 1963թ., անցել է 53 տարի: Մինչև ե՞րբ սա պետք է շարունակվի: Թուրքիան իսլամատյացության պատճառով է, որ չի կարողանում անդամակցել ԵՄ-ին»:

Ի պատասխան՝ Քեմերոնը կրկին հայտարարեց, որ նման արագությամբ Թուրքիան ԵՄ-ին կկարողանա անդամակցել 3000թ. ոչ շուտ. «Թուրքիան չի շարժվում ճիշտ ուղղությամբ: Անհնար է գտնել որևէ փորձագետի, ով կասի, թե Թուրքիան առաջիկա 30 տարում կարող է անդամակցել ԵՄ-ին»: Քեմերոնի այս հայտարարությունից օրեր անց տեղի ունեցավ *Brexit*-ը, և Թուրքիայի իշխանությունները սկսեցին չարախնդալ Քեմերոնի վրա: Բրիտանական *Financial Times* թերթը հունիսին գրեց, որ ավելի շուտ Ստամբուլը կվերանվանվի Կոստանդնուպոլիս, քան Թուրքիան կանդամակցի ԵՄ-ին:

Թուրքիան հետ վերադարձրեց Եվրոպական խորհրդարանի զեկույցը, որում, նախորդ տարվա զեկույցի նման, Եվրախորհրդարանը Թուրքիային կոչ էր անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Հունիսի 2-ին Բունդեսթագն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև, որով ընդունեց կայսերական Գերմանիայի մեղսակցությունը Հայոց ցեղասպանությանը: Դա կտրուկ սրեց Գերմանիայի և Թուրքիայի հարաբերությունները, Թուրքիան Գերմանիայից հետ կանչեց իր դեսպանին և սպասում է, որ Գերմանիան հետքայլ անի:

Ադրբեջան, Վրաստան–Թուրքիա. Բունդեսթագի բանաձևի ընդունման օրը հայտնի դարձավ, որ Կարսում մեկնարկել են թուրք-ադրբեջանական զորավարժությունները, որոնց մասնակցում են Նախիջևանի առանձին համազորային բանակը և Թուրքիայի 3-րդ բանակը: Հունիսին Քոնիայի ավիաբազայում անցկացվեցին թուրք-ադրբեջանական *İŞIK*-2016 որոնողա-փրկարարական վարժանքները, որոնց մասնակցել են Ադրբեջանի ՌՕՈւ «Մի-17» տիպի 3 ռազմական-տրանսպորտային ուղղաթիռներ և «Մի-35» տիպի 3 մարտական ուղղաթիռ: Ադրբեջանում զինված ուժերի օրվա (հունիսի 26) կապակցությամբ Թուրքիայում Ադրբեջանի դեսպանատունը կազմակերպեց հա-

տուկ ընդունելություն, որին ներկա էր Թուրքիայի բարձրագույն ռազմական ողջ հրամանատարությունը՝ բացի ռազմածովային ուժերի հրամանատարից: Թուրքական մամուլը գրեց, որ Թուրքիայի բարձրագույն զինվորական հրամանատարության՝ գրեթե ամբողջ կազմով ընդունելությանը մասնակցելը ցույց է տալիս, որ թուրքական բանակն ադրբեջանականի կողքին է, որ դա աջակցության ուղերձ է Ադրբեջանին և, բացի այդ, նաև Հայաստանին հասցեագրված յուրօրինակ ուղերձ:

Հունիսի սկզբին Ադրբեջան այցելեց Բինալի Յըլդըրըմը, ինչը Թուրքիայի վարչապետի կարգավիճակով նրա առաջին այցն էր արտերկիր (չհաշված ինքնահռչակ Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետություն այցելելը): Յըլդըրըմն Ադրբեջանում արեց մի շարք ուշագրավ հայտարարություններ. «*TANAP* և *TAP* գազատարները կարևոր են Եվրոպայի էներգաանվտանգության համար», «Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կառուցումը կավարտվի այս տարի», «քաղաքական և տնտեսական ոլորտներում Ադրբեջանի ձեռքբերումները Թուրքիայի ձեռքբերումներն են», «մենք մեկ ազգ ենք, երկու պետություն», «Ադրբեջանի ընկերը մեր ընկերն է, նրա թշնամին՝ մեր թշնամին», «մենք ԼՂ հարցում մշտապես կաջակցենք Ադրբեջանին, եկել է Հայաստանին կանգնեցնելու ժամանակը»: Յըլդըրըմն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին հրավիրեց օգոստոսի 26-ին մասնակցել Ստամբուլի երրորդ՝ սուլթան Սելիմ Ահեղի անվան կամրջի բացմանը:

Հունիսի վերջին Յըլդըրըմը շնորհակալություն հայտնեց Ադրբեջանին՝ ռուս-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ գործադրած ջանքերի համար: Հաղորդվեց, որ Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը Բաքվում կարող է տեղի ունենալ մինչև տարեվերջ, իսկ երեք երկրների պաշտպանության նախարարների հերթական հանդիպումը տեղի կունենա հուլիսի վերջին-օգոստոսի սկզբին, Բաթումում:

ԱԴՐԲԵՋԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. հունիս

Անուշավան Բարսեղյան[*]

Ռազմական համագործակցություն. Ադրբեջանի ռազմական համագործակցության ակտիվացման միտումները դրսևորվել են նաև 2016թ. հունիսին: Այս գործընթացում որոշիչ դերակատարում է ստանձնել Թուրքիան՝ խթանելով բազմակողմ զինավարժություններին Ադրբեջանի ԶՈՒ մասնակցությունը: Միայն հունիսին ԱՀ ԶՈՒ տարբեր ստորաբաժանումներ Թուրքիայի տարածքում մասնակցել են 4 այդ տիպի զինավարժությունների: Դրանց թվում են *Anadolu Kartalı-2016* («Անատոլիական արծիվ»), *Commando Ex 2016, «İşık-2016»* (Լույս-2016) և Կարսում անցկացված երկկողմանի զինավարժությունները, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են մոտ քսան երկրի ԶՈՒ ներկայացուցիչներ, այդ թվում՝ դիտորդի կարգավիճակով:

Կարսում Ադրբեջանի և Թուրքիայի (առաջին անգամ նման միջոցառմանը Վրաստանը ներկայացել է դիտորդի կարգավիճակով) 1200 զինծառայողների ներգրավմամբ անցկացված զինավարժությունների հիմնական նպատակը եղել է փորձի փոխանակումը, համագործակցության կատարելագործումը, շտաբներում համատեղ ծրագրավորված գործողությունների ստուգումը և զինված ստորաբաժանումների համատեղ գործողությունների անցկացման մակարդակի բարձրացումը:

Commando Ex 2016 զինավարժությունների ընթացքում մասնակից 4 երկրների (այդ թվում՝ Բուլղարիան և Վրաստանը) 136 հատուկջոկատայիններ գրոհով վերցրել են պայմանական ահաբեկիչների գրաված օդանավակայանը: Զինավարժություններն առավելագույնս հարմարեցված են եղել մարտական պայմաններին, հատուկջոկատայիններն անցել են նաև էքստրեմալ պայմաններում գոյատևելու դասընթացներ:

«İşık-2016» միջազգային զինավարժություններին, որոնք ներառել են որոնողա-փրկարարական վարժանքներ, բացի ԱՀ ԶՈՒ ցամաքային զորքերի,

[*] «Նորավանք» ԳԿՀ քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

ռազմածովային և ռազմաօդային ուժերի ստորաբաժանումներից, մասնակցել են նաև Թուրքիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Սաուդյան Արաբիայի և Հս.Կիպրոսի չճանաչված պետության ներկայացուցիչները: Դիտորդի կարգավիճակով ներկա են եղել Բելգիայի, Կատարի, Քենիայի, Կոսովոյի, Լիբանանի, Մակեդոնիայի, Մալայզիայի, Լեհաստանի, Սուդանի, Չիլիի, Հունաստանի, Բանգլադեշի և Սինգապուրի զինվորականները: Ադրբեջանը ներկայացված է եղել ռազմաօդային ուժերի «Մի-17» տիպի 3 ռազմական-տրանսպորտային և «Մի-35» տիպի երեք ռազմական ուղղաթիռներով:

Ռուս-ադրբեջանական ռազմական ակտիվ համագործակցության հետ կապված հարցեր են քննարկվել ՌԴ և ԱՀ պաշտպանության նախարարների հանդիպման ընթացքում: Համաձայնություն է ձեռք բերվել ՌԴ ռազմական բուհերում Ադրբեջանի ԶՈՒ կուրսանտների թիվը մեծացնելու վերաբերյալ: Ռուսաստանի պաշտպանության նախարար Ս.Շոյգուն ՌԴ-ի և ԱՀ-ի միջև ռազմական համագործակցությունը որակել է ռազմավարական, ինչպես երկու երկրների համագործակցության մյուս ուղղությունները:

Իսրայելի հետ վերընթաց զարգացող ռազմական համագործակցության շրջանակներում Ադրբեջանը ձեռք է բերել իսրայելական արտադրության *«Sand Cat»* զրահամեքենաների առնվազն 4 տարատեսակ: Մեքենաները համալրված են *«Mini Samson»* մարտական մոդուլներով՝ հագեցած *«Rafael»* ընկերության 12.7 մմ տրամաչափի գնդացիրներով, ինչպես նաև *«Spike LR»* տիպի հակատանկային հրթիռային կայանքներով: *«Samson MLS»* մոդուլներում տեղադրված օպտիկական համակարգերը և լազերային հեռաչափերը թույլ են տալիս հետևել թիրախին ցանկացած եղանակային պայմաններում: Ուշադրության է արժանի էլեկտրաօպտիկական համակարգով համալրված մոդելը, որը հեռահար դիտման հնարավորություն է տալիս:

Գերմանիա կատարած այցի ընթացքում ուշագրավ հայտարարությամբ հանդես է եկել ԱՀ նախագահ Ի.Ալիևը: Նա նշել է, որ Ադրբեջանն այլ երկրների թվում զենք և զինամթերք է գնում նաև Իրանից: Նախկինում ԱՀ ԶՈՒ պահեստազորի գեներալ-լեյտենանտ Յաշար Այդեմիրովը հարցազրույցներից մեկում նշել էր, որ ապրիլյան պատերազմի ընթացքում ԱՀ ԶՈՒ-ն կիրառել է Իրանից գնված D-30A 122 մմ-անոց հաուբիցներ, 107 մմ-անոց հրթիռային *«YARS»* համազարկային կայաններ և այլ զինատեսակներ: Չնայած մեկ տարի

առաջ Ադրբեջանի և Իրանի ՊՆ նախարարները պայմանավորվել են պաշտպանական հանձնաժողով ստեղծելու մասին, Թեհրանի պաշտոնական շրջանակները չեն հաստատում Բաքվին զինամթերք վաճառելու փաստը: Չի բացառվում, որ ադրբեջանական կողմն այսպիսի հայտարարություններով փորձում է անվստահության մթնոլորտ ստեղծել Հայաստանի և Իրանի փոխհարաբերություններում:

Ադրբեջան-Իրան. Այս ամիս երկու երկրների միջև համաձայնություն է ձեռք բերվել Կազվին-Ռեշտ-իրանական Աստարա - ադրբեջանական Աստարա երկաթուղային հատվածի շինարարությունը վարկավորելու մասին: Ըստ Իրանի քաղաքաշինության և ճանապարհաշինության փոխնախարար Ալի Նուրզադի հայտարարության, Ադրբեջանի Միջազգային բանկը Իրանին կտրամադրի $500 մլն վարկ այդ հատվածի շինարարությունն ավարտելու համար[1]: Ադրբեջանը ցանկություն է հայտնել վարկավորել երկաթուղու շինարարությունն այն բանից հետո, երբ Իրանը հայտարարել է ֆինանսների բացակայության մասին: Վարկը կտրվի նույն պայմաններով, ինչ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու շինարարության համար Վրաստանին Ադրբեջանի կողմից հատկացված վարկը[2]՝ տարեկան 1% տոկոսադրույքով: Հարկ է նշել, որ Իրանի լրատվամիջոցներում և փորձագիտական շրջանակներում կասկածի տակ է դրվել Ադրբեջանից վարկ վերցնելու նպատակահարմարությունը, քանի որ այն կարող է բացասաբար ազդել Իրանի իմիջի վրա:

Ադրբեջանի և Իրանի հարաբերություններում որոշակի լարվածություն են առաջացրել ԱՀ Միլի մեջլիսում «Արաքս գետի վրա «Խուդաֆերին» և «Գիզ գալասի» հիդրոհանգույցների և հէկերի շինարարության շարունակման, շահագործման, էներգետիկայի և ջրային պաշարների օգտագործման ոլորտներում համագործակցության մասին» երկու երկրների միջև ստորագրված համաձայնագրի քննարկումը: Ադրբեջանցի պատգամավորները, այդ թվում՝ իշխող կուսակցության անդամները, մեղադրելով Իրանին Հայաստանի հետ ռազմավարական հարաբերություններ զարգացնելու մեջ, նշել են ԻԻՀ նախագահի Հայաստան նախատեսվող այցի, Հայաստանի և Իրանի միջև առանց վիզային ռեժիմի սահմանման, Հայաստանին Իրանի կողմից իբր զինամթերքի

[1] Ընդհանուր առմամբ, ներկայում պատրաստ է այդ հատվածի մոտ 93%-ը, իսկ մնացած մասը նախատեսվում է շահագործման հանձնել 2017թ. մարտին:

[2] Ադրբեջանը երկաթուղու շինարարության համար Վրաստանին տրամադրել է $750 մլն վարկ:

մատակարարման մասին: Ադրբեջանցի պատգամավորները հիշել են անգամ, որ 1918թ. Իրանը դեմ է եղել Ադրբեջան անունով պետության գոյությանը և չի ճանաչել դրա անկախությունը: ԱՀ Միլի մեջլիսի պատգամավոր Գ.Հասան-գուլիևը հակաադրբեջանական է անվանել Իրանի ներկա քաղաքականությունը և սպառնացել, որ եթե Իրանը չհարգի երկրում բնակվող «30 միլիոն ադրբեջանցիների» իրավունքները, ապա կբախվի տխուր հետևանքների:

Ադրբեջանական մեղադրանքներին անդրադարձել են ԱՀ-ում Իրանի դեսպանը, իրանական լրատվամիջոցները, Իրանի քաղաքական և փորձագիտական շրջանակները: Եթե Ադրբեջանում Իրանի դեսպան Մոհսուն Փակ Ային հասկանալի պատճառներով հանդես է եկել կոռեկտ և դիվանագետին բնորոշ արձագանքով, ապա իրանական լրատվամիջոցներն ադրբեջանցի պատգամավորների որակումները գնահատել են որպես «անամոթ հայտարարություններ», ծաղրանքի են ենթարկել «Ադրբեջանի արժեքները, ավելի ճիշտ դրանց բացակայությունը», «Ադրբեջանի գիտական և տնտեսական առաջընթացը», քաղաքական բանտարկյալների առկայությունը և բնակչության մեծամասնության աղքատությունը:

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի նախկին գեներալ, Իրանի Արդաբիլ նահանգի նախկին նահանգապետ Մանսուր Հաղիղաթփուրը, անդրադառնալով ԱՀ Միլի մեջլիսի քննարկումներին, նշել է, որ Իրանի ազգային շահերն Ադրբեջանի հետ կապ չունեն: Նախկին նահանգապետը հայտարարել է. «Երբ Ադրբեջանն Իսրայելի և Սաուդյան Արաբիայի հետ բարեկամական կապեր է հաստատում, այդ ժամանակ ինչո՞ւ Ադրբեջանում ոչ ոք ձայն չի բարձրացնում, իսկ ինչ վերաբերում է Հյուսիս-Հարավ միջանցքի ձևավորմանը, ապա Իրանն այդ հարցում որևէ մտահոգություն չունի: Հայաստանն այդ կարևոր ուղիներից մեկն է և կարող է Հյուսիս-Հարավ միջանցքը կապող երկիրը դառնալ»:

Ադրբեջան-ԱՄՆ. Նախկինում նշել էինք, որ «Ադրբեջանա-ամերիկյան ալյանսի» կազմալուծումից հետո Ադրբեջանն ավելի ակտիվ փորձեր է ձեռնարկում ամերիկյան և հրեական լոբբիստական կազմակերպությունների միջոցով ԱՀ իշխանությունների իմիջի բարձրացման և երկկողմանի կապերի խթանման ուղղությամբ: Ադրբեջանի նշված քաղաքականությանն է անդրադարձել բրիտանական *«Real Independent News & Film»* կայքը:

Ըստ նրա, շատ բռնապետական վարչակարգեր եկել են այն եզրահանգման, որ ԱՄՆ լոյալությունը ստանալը կարող է երկարացնել իրենց իշխանությունը: Որպես այդպիսի բռնապետ կայքը նշում է Ի.Ալիևի անունը՝ ավելացնելով, որ Կոռուպցիայի և կազմակերպված հանցագործության հետաքննության *OCCRP* նախագիծը վերջինին ճանաչել է տարվա ամենակոռումպացված ղեկավար:

Նշված նպատակների իրագործման համար ԱՀ իշխանությունները վարձել են մի շարք լոբբիստական կազմակերպություններ, որոնց շարքում առավել հայտնի են *«Tool Shed Group», «Roberti Global», «DCI Group»* և *«Podesta Group»* ընկերությունները: *«DCI Group»* ընկերությունը նույնիսկ ունի առանձին *«AZ LLC»* բաժին, որը զբաղված է «արդար Ադրբեջանի» իմիջի կերտմամբ (այստեղ աշխատել են ամերիկյան հայտնի քաղաքական գործիչներ Միթ Ռոմնին և Դեբ Ֆիշերը): Կայքի պնդմամբ, ԱՀ իշխանության ներկայացուցիչները կաշառել են նաև ամերիկյան որոշ ազդեցիկ ՀԿ-ների ղեկավարների՝ լավ հասկանալով դրանց կարևոր դերակատարումը ԱՄՆ արտաքին քաղաքականությունում: Ադրբեջանի օգտին աշխատող ամերիկյան գործիչների թվում նշվում են Միրիամ Լանսկոյի (Ժողովրդավարության զարգացման ազգային հիմնադրամի Ռուսաստանի և Եվրասիայի ծրագրի ղեկավար) և Բրենդա Շաֆերի (Քաղաքական գիտությունների ամերիկյան ասոցիացիայի անդամ) անունները:

Բաքուն այս գործունեությունը հիմնականում իրականացնում է *SOCAR* ընկերության և ԱՄՆ-ում ԱՀ դեսպանատան միջոցով: Կայքը նշում է հատկապես դեսպան Էլին Սուլեյմանովի ակտիվ դերակատարումը, որի կինը, ըստ բրիտանական լրատվամիջոցի, հատուկ վերաբերմունքի է արժանանում Հիլարի Քլինթոնի շրջապատում: Նա մշտապես ընդունելություններ է կազմակերպում, որոնց ներկա են լինում Հ.Քլինթոնի թիմակիցներ Կապրիսիա Մարշալը (ԱՄՆ Պետքարտուղարության նախկին աշխատակից) և Դեբի Դինգելը (ԱՄՆ Կոնգրեսի անդամ):

Հետաքրքրական է, որ միաժամանակ հստակություն մտցվեց 2013թ. Ադրբեջանի կառավարության գաղտնի ֆինանսավորմամբ ԱՄՆ մի շարք կոնգրեսականների Բաքու կատարած այցի շուրջ սկանդալային զարգացումներում[3]: Դիտորդական խումբը, ուսումնասիրելով ուղևորության հետ կապ-

[3] Ա.Բարսեղյան, Վերջին զարգացումներն Ադրբեջանում, http://www.noravank.am/arm/articles/detail.php/?ELEMENT_ID=14029

ված ԱՄՆ Կոնգրեսի էթիկայի վարչության (*OCE*) զեկույցը, եզրակացրել է, որ այն հակասում է ԱՄՆ օրենքներին, ինչից հետո ուղևորությանը մասնակցած ԱՄՆ օրենսդիրները ստիպված են եղել ԱՄՆ կառավարությանը հանձնել կասկածելի հանգամանքներում ստացած նվերները: Ընդհանուր նշանակության ծառայությունների վարչությանը վերադարձված նվերների ցանկը բացահայտում է, որ Բաքու են այցելել Կոնգրեսի ներկայիս 9 անդամ և նրանց ուղեկցող 32 անձինք, որոնցից յուրաքանչյուրը հազարավոր դոլարներ արժողությամբ նվերներ է ստացել: Օրենսդիրներից մի քանիսը Բաքվի համաժողովից հետո նաև մեկնել են Թուրքիա և լրացուցիչ նվերներ ստացել այնտեղ: Դիտորդական խումբը հայտնել է, որ Տեխասում գտնվող հասարակական կազմակերպությունները կեղծ հայտարարություններ են լրացրել՝ նշելով, որ իրենք են վճարում ուղևորության համար, երբ իրականում համաժողովը և ուղևորությունները ֆինանսավորել է *SOCAR*-ը՝ $750 հազար փոխանցելով ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով:

Այստեղ հարկ է նշել, որ ԱՀ ներկայացուցիչներից մեծ չափերի կաշառք ստանալու համար այս ամիս Միլանի դատախազության կողմից մեղադրանք է ներկայացվել իտալացի հայտնի քաղաքական գործիչ, ԵԽԽՎ Եվրոպական ժողովրդական կուսակցության խմբակցության նախագահ Լուկա Վոլոնտեին:

Ադրբեջանական սփյուռք. ԱՀ իշխանությունները քայլեր են ձեռնարկում արտերկրում ապրող ադրբեջանցիների մասնակցությամբ ստեղծվող կազմակերպությունների ամրացման ուղղությամբ՝ նպատակ ունենալով դրանք ծառայեցնել արտաքին քաղաքական խնդիրների լուծմանը: Ելույթ ունենալով Բաքվում կայացած Աշխարհի ադրբեջանցիների 4-րդ համագումարում՝ Ի.Ալիևը դժգոհություն է հայտնել, որ արտերկրում ապրող ադրբեջանցիները բավարար չափով ներկայացված չեն իրենց բնակության երկրների օրենսդիր և գործադիր մարմիններում, չնայած ունեն մեծ բիզնես-հնարավորություններ: Համագումարից անմիջապես հետո ստորագրված հրամանագրով Ի.Ալիևը պահուստային միջոցներից 3 միլիոն մանաթ ($1.94 մլն) է հատկացրել ԱՀ Սփյուռքի հետ աշխատանքների պետական կոմիտեին՝ ադրբեջանական սփյուռքի կառույցներն ուժեղացնելու նպատակով:

Սփյուռքի վերաբերյալ Բաքվի տեսլականը և դրա իրագործման նպատակով ձեռնարկված քայլերը քննադատության են արժանացել Աշխարհի ադրբեջանցիների կոնգրեսի նախագահ Սաբիր Ռուստամխանլիի կողմից:

Մեկնաբանելով նշված համագումարի աշխատանքները՝ նա նշել է, որ սփյուռքի կառույցները չեն կարող հրամանագրերով ձևավորվել, դրանք պետք է աստիճանաբար զարգանան: Ս.Ռուստամխանլին քննադատել է նաև իրար կրկնող կառույցների ձևավորումը, մասնավորապես՝ Աշխարհի ադրբեջանցիների կոնգրեսի գոյության դեպքում պետք չէ ստեղծել եվրոպական, սկանդինավյան, արևմտյան, արևելյան կոնգրեսներ: Ս.Ռուստամխանլին նաև անընդունելի է համարում ՌԴ-ում, Վրաստանում, Իրանում, Թուրքիայում և Սիրիայում ապրող ադրբեջանցիներին սփյուռք համարելը, քանի որ նրանք ապրում են իրենց պատմական հայրենիքում: Նա հատկապես շեշտել է համագումարին որպես սփյուռքի ներկայացուցիչներ «հարավային ադրբեջանցիների» (խոսքն Իրանի ադրբեջանցիների մասին է) հրավիրված լինելու հանգամանքը՝ համոզմունք հայտնելով, որ նրանք պետք է ուղղակի հյուրեր լինեին, քանի որ «Հարավային Ադրբեջանը մեր հայրենիքն է»:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. հունիս

Ջոնի Մելիքյան*

Անցած ամիս տեղի են ունեցել վրացական կառավարության անդամների արդյունավետ այցելություններ՝ վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու գլխավորությամբ, ինչպես նաև Թբիլիսի են այցելել օտարերկրյա պատվիրակություններ, ինչը նոր թափ է հաղորդել Վրաստանի իշխանությունների արտաքին քաղաքական և տնտեսական գործունեությանը: Առանձին նշենք Վրաստանի ԱԳՆ և էկոնոմիկայի նախարարության համատեղ նախաձեռնության մասին. միջպետական առևտրի զարգացման և արտահանումը խթանելու համար երկրի կառավարությունն անցում է կատարելու արտասահմանյան դեսպանատներում առևտրային կցորդներ նշանակելու պրակտիկային: Այս մասին հայտարարել է Վրաստանի ԱԳՆ ղեկավար Միխայիլ Ջանելիձեն բիզնես-ասոցիացիաների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, որտեղ ներկայացրել է նաև իր գերատեսչության մշակած 2016-2017թթ. տնտեսական դիվանագիտության գործողությունների պլանը:

Վրաստանի արտաքին քաղաքական իմիջի համար կարևոր եղավ Քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային գիտության և հետևանքների կառավարման համաշխարհային կոնգրեսի (*World Congress on CBRNe Science & Consequence Management*) անցկացումը Թբիլիսիում (մայիսի 30 - հունիսի 2): Կոնգրեսին մասնակցում էին աշխարհի 30 երկրների գիտնականներ, փորձագետներ, պաշտոնական անձինք և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Քննարկվել են միջուկային և ռադիոլոգիական անվտանգության, զանգվածային ոչնչացման զենքի նյութերի չտարածման հարցեր, կենսապաշտպանվածության և կենսանվտանգության հիմնախնդիրներ, ինչպես նաև քիմիական անվտանգության ասպեկտները: Թեման խիստ հրատապ է ինչպես Հարավային Կովկասի (որը տարանցիկ տարածաշրջան է

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

հանդիսանում), այնպես էլ Վրաստանի համար, որտեղ միայն 2015թ. օգոստոսից Անվտանգության ծառայության կողմից բացահայտվել և կասեցվել է միջուկային նյութերի ապօրինի շրջանառության չորս փաստ, կալանվել է 19 մարդ:

Վրաստանի արտաքին քաղաքականության առավել կարևոր ուղղությունների, ինչպես նաև նշանակալի արտաքին քաղաքական այցելությունների թվում արժե նշել հետևյալները. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարական պատվիրակության առաջին պաշտոնական այցը Վրաստանի Հանրապետություն (հունիսի 2), վրացական կառավարական պատվիրակությունների պաշտոնական այցերը Գերմանիա (հունիսի 15-16) և Շվեյցարիա (հունիսի 27-28)՝ վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու գլխավորությամբ, և երկրի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլու այցը Բրյուսել (հունիսի 8): Բացի այդ, անցած ամիս տեղի է ունեցել Վրաստանի և ԵՄ վիզային ազատականացման գործընթացի արգելակում, ինչն անդրադարձել է երկրի արտաքին քաղաքական վեկտորի վրա և խթանել է վրաց քաղաքական գործիչների և նախարարների շփումներն ու այցելությունները Բրյուսել:

Վրաստան-Չինաստան. Վրաստանի արտաքին քաղաքականության եվրոպական և եվրատլանտյան վեկտորներին զուգահեռ՝ պոտենցիալ է հավաքում նաև ասիական, մասնավորապես՝ չինական ուղղությունը: Անցած ամսվա սկզբին ՉԺՀ կառավարական պատվիրակությունը՝ երկրի Պետական խորհրդի վարչապետ Չժան Գաոլիի գլխավորությամբ, առաջին պաշտոնական այցով ժամանեց Վրաստան: Վրաստանի կառավարության աշխատակազմ կատարած այցի ընթացքում Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին և ՉԺՀ առևտրի փոխնախարար, միջազգային առևտրային բանակցություններում երկիրը ներկայացնող Չժուն Շանը ստորագրեցին համաձայնագիր «Վրաստանի կառավարության և ՉԺՀ կառավարության միջև տնտեսական և տեխնիկական համագործակցության մասին», որի շրջանակներում չինական կողմը պարտավորվեց Վրաստանին հատկացնել անհատույց օգնություն՝ 60 մլն յուանի (մոտ $9,1 մլն) չափով, Վրաստանի բնակչության առողջական վիճակը բարելավելու նպատակով: Ստորագրվեց նաև փոխըմբռնման հուշագիր Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի և ՉԺՀ առևտրի նախարարության միջև:

Վրաստանի կառավարության մամուլի ծառայության տեղեկատվությամբ՝ հունիսի 2-ին Թբիլիսիում կայացած հանդիպման ժամանակ Վրաստանի վար-

չապետ Գեորգի Կվիրիկաշվիլին և Չինաստանի Պետխորհրդի վարչապետ Չժան Գաոլին քննարկել են երկու երկրների տնտեսական համագործակցության հարցերը, նոր «Մետաքսի ճանապարհի» հնարավորությունները (տնտեսական և ենթակառուցվածքային նախագծեր), ինչպես նաև դիտարկել են Վրաստանի տարանցման պոտենցիալի զարգացման հեռանկարները: Քաղաքական գործիչները նշել են, որ զարգացումը բարձրացնում է երկու երկրների համագործակցության նշանակությունը: Հանդիպման ընթացքում Վրաստանի կառավարության ղեկավարը հայտարարել է, որ իր երկիրը հսկայական նշանակություն է տալիս Չինաստանի հետ գործընկերությանը և բաց է «չինացի ժողովրդի, չինական ներդրումների և նորարարական գաղափարների» համար:

Չինական ներդրումների ներգրավման և առևտրի զարգացման նպատակով, համաձայն Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Դմիտրի Կումսիշվիլու, Չինաստանում և Վրաստանում ստեղծվելու են առևտրային և ներդրումային խորհուրդներ: Ըստ նրա՝ Վրաստանում համաձայնագրի իրականացնողներն են լինելու էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությունը, իսկ Չինաստանում՝ առևտրի նախարարությունը: Այցի կարևորությունն ընդգծվում է նաև նրանով, որ ներկայում Վրաստանում և Չինաստանում երկու երկրների միջև ազատ առևտրի շուրջ բանակցություններ են վարվում: Կողմերի կարծիքով՝ երկխոսությունն անցնում է բավական կառուցողական, նախատեսվում է այն ավարտել գալիք ձմռանը: Բանակցությունների երրորդ փուլը տեղի կունենա Թբիլիսիում հուլիսին:

Տնտեսական ցուցանիշները նույնպես վկայում են պաշտոնական Թբիլիսիի՝ արտաքին առևտուրը դիվերսիֆիկացնելու փորձի մասին՝ ամրապնդելով դիրքերն Ասիայում առհասարակ և Չինաստանում՝ մասնավորաբար: ՉԺՀ-ն Վրաստանի հիմնական առևտրային գործընկերների հնգյակում է: Ընթացիկ տարվա հունվար-ապրիլին առևտրաշրջանառությունը կազմել է ավելի քան $225 մլն (արտաքին առևտրային շրջանառության 6,8%-ը): Չինաստան են տարվում պղնձի հանքաքար և խտանյութեր, պղնձի ջարդոն, ոգելից խմիչքներ և, առաջին հերթին, վրացական գինի[1] (Վրաստանը չորրորդ արտահանական շուկան է Ռուսաստանից, Ուկրաինայից և Ղազախստանից հետո):

[1] 2016թ. սկզբից ՉԺՀ է արտահանվել ավելի քան 779,4 հազար շիշ, ինչը 58%-ով ավելին է, քան 2015թ. նույն ժամանակամիջոցում:

Վրաստան-Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի (ԱԱԵԱ) երկրներ. Եվրոպական վեկտորի զարգացման շրջանակում հունիսին կարևոր է եղել Իսլանդիայի արդյունաբերության և առևտրի նախարար Ռագնհեիդուր Էլին Արնադոտիրի (*Ragnheiour Elin Arnadottir*) այցը Վրաստան: Նա հանդիպել է Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Դմիտրի Կումսիշվիլու հետ: Քննարկվել են երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների խորացման հարցերը և Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի (*EFTA,* Իսլանդիան այս ասոցիացիայի անդամ է) հետ ազատ առևտրի մասին բանակցությունների առաջընթացը: Նշենք, որ բանակցությունների մեկնարկը տրվել էր 2014թ. նոյեմբերին ասոցիացիայի երկրների նախարարների հանդիպման ժամանակ: Իսլանդիայից բացի այս ասոցիացիայի անդամ է եվրոպական ևս երեք երկիր, որոնք ԵՄ անդամ չեն՝ Շվեյցարիան, Նորվեգիան և Լիխտենշտեյնը, որոնց բնակչության ընդհանուր թիվը 14 մլն է:

Այսպիսով, արդեն ամսվա վերջին Բեռնում (Շվեյցարիա), *EFTA*-ի նախարարների հերթական հանդիպման ժամանակ, Վրաստանի և Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի երկրների էկոնոմիկայի նախարարների կողմից ստորագրվել է Համաձայնագիր *EFTA*-ի հետ Վրաստանի ազատ առևտրի մասին: Փաստաթուղթը ստորագրվել է Դմիտրի Կումսիշվիլու կողմից՝ Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու Շվեյցարիա կատարած պաշտոնական այցի շրջանակներում: Սա առաջին միջազգային համաձայնագիրն էր առևտրի ոլորտում, որը Վրաստանը կնքել է Նորվեգիայի, Իսլանդիայի և Լիխտենշտեյնի հետ: Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի բոլոր կողմերի վավերացումից հետո, այն ենթադրում է, որ ցանկացած արդյունաբերական արտադրանք Վրաստանից այս չորս երկրներ կմտնի առանց հավելյալ մաքսահարկերի: Բացի այդ, վրացական գյուղտնտարտադրանքի նկատմամբ կգործի զրոյական սակագին: Որոշակի արտադրանքների համար սակագները կրճատվել են գրեթե կրկնակի և հասցվել են նվազագույնի, ինչը շատ կարևոր է այն բանի համար, որպեսզի վրացական արտադրանքը մրցունակ դառնա *EFTA* շուկայում:

Մեկնաբանելով այցի արդյունքները՝ Վրաստանի կառավարության ղեկավարը նշել է, որ Վրաստանն արդեն կնքել է Համաձայնագիր խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու մասին (*DCFTA*) Եվրամիության հետ, այն ազատ առևտուր ունի Թուրքիայի և ԱՊՀ երկրների հետ, գործում է ԱՄՆ-ից,

Կանադայից և Ճապոնիայից արտոնյալ արտահանման ռեժիմը, իսկ մինչև տարեվերջ պաշտոնական Թբիլիսին սպասում է Չինաստանի հետ Ազատ առևտրի մասին համաձայնագրի կնքմանը: «Դա նշանակում է, որ Վրաստանը մոտ ապագայում կունենա ազատ առևտրի մասին համաձայնագրերի ցանց, որը նրան հնարավորություն կտա ապահովել ավելի քան 2 մլրդ սպառողների»,- ասել է Գ.Կվիրիկաշվիլին Բեռնում:

Վրաստան-ԵՄ. Չնայած Եվրամիության հետ վիզային ռեժիմի ազատականացման գործողությունների պլանի (*VLAP*) իրագործման մեջ ձեռք բերված առաջընթացին, ինչպես նաև Եվրախորհրդարանին Եվրահանձնաժողովի ներկայացրած առաջարկությանը Վրաստանի հետ 2016թ. մարտի 9-ից վիզային ռեժիմը հանելու[2] մասին, անցած ամիսը, ինչպես և մայիսը, կարելի է համարել բացասական Վրաստանի եվրոպական արտաքին քաղաքական վեկտորի և շտապ անվիզա ռեժիմ ստանալու համար:

Մայիսի սկզբին գերմանական լրատվամիջոցները տեղեկատվություն տարածեցին այն մասին, որ Եվրամիության արդարադատության և ներքին գործերի նախարարները չեն համաձայնի անվիզա ռեժիմ մտցնել Վրաստանի, Ուկրաինայի և Թուրքիայի հետ, քանի դեռ ուժի մեջ չի մտել այսպես կոչված «զսպման մեխանիզմը» (դրա առկայությամբ ԵՄ անդամ ցանկացած երկիր իրավունք կունենա անհատապես և իր նախաձեռնությամբ գործի դնել անվիզա ռեժիմի կանգնեցման մեխանիզմը): Մայիսի 20-ին Բրյուսելում տեղի ունեցած նիստում Եվրամիության անդամ երկրների արդարադատության և ներքին գործերի նախարարները պայմանավորվեցին, որ Վրաստանի համար վիզային ազատականացման հարցը կդրվի Եվրամիության անդամ պետությունների մշտական ներկայացուցիչների կոմիտեի (*COREPER*) նիստում: Սակայն, չնայած մայիսի 24-ին սույն հարցը ներառվել էր *COREPER*–ի նիստի օրակարգում, Եվրամիության անդամ երկրների դեսպաններն այդպես էլ չկարողացան պայմանավորվել այս հարցի շուրջ:

Չնայած եվրոպական առաջնորդների, այդ թվում և Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի (մայիսի 31-ին Բորդոյում Վրաստանի վարչապետի հետ հանդիպման արդյունքներով) և Եվրամիության խորհրդի նախագահ Դո-

[2] ԵՄ-ի հետ վիզային ազատականացումը Վրաստանի՝ կենսաչափական անձնագրեր ունեցող քաղաքացիներին հնարավորություն կտա կարճատև այցելություններ (90-օրյա այցելություն ցանկացած 180 օրվա ընթացքում) կատարել Շենգենյան գոտու տարածք, որն ընդգրկում է ԵՄ 22 անդամ երկիր, ԵՄ ոչ անդամ 4 երկիր և Շենգենյան գոտի մտնելու թեկնածու 4 երկիր:

նալդ Տուսկի (հունիսի 8-ին Վրաստանի նախագահի հետ հանդիպման արդյունքներով) աջակցության վերաբերյալ դրական հավաստիացումներին՝ հունիսի 1-ին և 7-8-ին Բրյուսելի հերթական նիստերում *COREPER*-ի անդամները նորից չկարողացան ընդունել որոշում Վրաստանի քաղաքացիների համար վիզային ռեժիմը հանելու վերաբերյալ: Այնուհետև, Գերմանիան և Եվրամիության մի շարք այլ անդամ երկրներ կանգնեցրին Վրաստանի համար վիզային ռեժիմի ազատականացման մասին բանաձի ընդունումը, իսկ քվեարկությունը, որը նախատեսված էր հունիսի 10-ին, հանվեց ԵՄ արդարադատության և ներքին գործերի նախարարների հանդիպման օրակարգից: *DW* գործակալության տեղեկատվությամբ՝ Վրաստանի հետ վիզային ռեժիմի ազատականացման դեմ են հանդես եկել Գերմանիան, Ֆրանսիան, Բելգիան և Իտալիան: Այս քայլի հակառակորդները զգուշանում են, որ վիզաները հանելուց հետո ԵՄ-ում կավելանա Վրաստանից հանցավոր աշխարհի ներկայացուցիչների թիվը:

ԵՄ ամենաազդեցիկ երկրի՝ Գերմանիայի աջակցությունն ստանալու համար Վրաստանի վարչապետ Գ.Կվիրիկաշվիլին հունիսի 15-16-ին իր առաջին պաշտոնական այցն է կատարել ԳԴՀ, որտեղ հանդիպել է կանցլեր Անգելա Մերկելի և Բունդեսթագի նախագահ Նորբերտ Լամերթի հետ: Սրան զուգահեռ՝ ԵՄ հինգ անդամ պետությունների (Բուլղարիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Ռումինիա) արտաքին և ներքին գործերի նախարարները դիմել են եվրոպական կառույցներին՝ պահանջելով, որպեսզի որքան հնարավոր է արագ սահմանվի անվիզա ռեժիմ Վրաստանի համար:

Այսպիսով, ԵՄ-ի հետ Վրաստանի անվիզա ռեժիմ մտցնելու հարցի հերթական քննարկումը տեղի է ունեցել հունիսի 20-ին, Լյուքսեմբուրգում, ԵՄ արտասահմանյան գործերով խորհրդի նիստում: Կապված այն բանի հետ, որ արդյունքները դրական էին Վրաստանի համար, պաշտոնական Թբիլիսին գոհունակություն է հայտնել ԵՄ անդամ պետությունների արտգործնախարարների՝ այս հարցում ունեցած դիրքորոշման համար: Վրաստանի ԱԳՆ ղեկավար Միխայիլ Ջանելիձեն հայտարարել է, որ Եվրախորհրդարանում Վրաստանի հետ անվիզա ռեժիմի հարցի վերաբերյալ զեկուցող Մարիա Գաբրիելը (*Mariya Gabriel*) հրապարակել է հաշվետվություն, որում երաշխավորել է հարցին կողմ քվեարկել *LIBE* (ԵՄ քաղաքացիական ազատությունների հարցերով, արդարադատության և ներքին գործերի կոմիտե) առաջին լսման ժամանակ: Հանդիպ-

ման աղբյունքների վերաբերյալ ԵՄ Գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին ասել է, որ Եվրամիության բոլոր 28 անդամ երկրներն ընդունում են, որ Վրաստանը կատարել է վիզային ռեժիմը հանելուն անհրաժեշտ բոլոր պայմանները, և հավելել է, որ այդ հարցը կդրվի *COREPER* նիստի օրակարգում։ Ըստ բանակցություններին մոտ կանգնած տեղեկատվական աղբյուրների՝ ԵՄ-ի հետ անվիզա ռեժիմը կարող է քվեարկության դրվել սեպտեմբերի սկզբին։

ԻՐԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. հունիս

Ռոման Կարապետյան*

Իրանի արտաքին քաղաքականության օրակարգում արաբական, մասնավորապես՝ Պարսից ծոցի երկրների հետ հարաբերությունների կարգավորումը շարունակում է մնալ գերխնդիր: Թեպետ միջազգային պատժամիջոցների չեղարկման գործընթացի մեկնարկով Իրանն ակտիվորեն զարգացնում է կապերն արևմուտքի, արևելքի երկրների և հանգուցային համարվող այլ ուղղություններով, նույնը չի կարելի ասել արաբական աշխարհի մասին: Կարծում ենք, այստեղ հիմնական խնդիրն այն է, որ արաբական որոշ երկրներ նույնպես հավակնում են տարածաշրջանում առաջնորդի դերին և իրենց այստեղ զգում են որպես «տանտեր»: Ծոցի երկրների և պաշտոնական Թեհրանի միջև առաջացած անդունդը ժամանակի ընթացքում ավելի է խորանում: Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունների կարգավորման միակ իրական հույսը կապվում էր Ռամադանին ընդառաջ իրանցիների՝ Մեքքա այցելության թույլտվության շուրջ բանակցությունների հետ, սակայն այս ուղղությամբ ևս կողմերին չհաջողվեց համաձայնության գալ: Թերևս, Արաբական թերակղզու երկրներից միակը Հորդանանն է, որ պահպանում է դիվանագիտական հարաբերություններ իսլամական հանրապետության հետ: Պաշտոնական Ամանը դիվանագիտական խողովակներով տեղեկացնում է Թեհրանին, որ ցանկանում է ամրացնել հարաբերությունները վերջինիս հետ:

Թեպետ արաբական երկրները մեղադրում են Իրանին Իրաքի ներքին գործերին միջամտելու մեջ, Թեհրանը շարունակում է ջանքեր գործադրել վերջինիս հետ հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ: Բաղդադում Իրանի դիվանագիտական ներկայացուցիչն Իրաքի վարչապետ Հեյդար ալ Աբադիի հետ հանդիպման ժամանակ ասել է, որ Իրանը պատրաստ է աջակցել Իրաքին ահաբեկչության դեմ պայքարում: Արաբ պաշտոնյան իր հերթին

* ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, պ.գ.թ.:

խոսել է երկու երկրների միջև հարաբերությունների զարգացման անհրաժեշտության մասին:

Իրանի համար մեծ կարևորություն ներկայացնող մյուս արաբական երկիրը Լիբանանն է: Իրանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Անսարին աշխատանքային այցով մեկնել է Բեյրութ, որտեղ հանդիպումներ է ունեցել Լիբանանի վարչապետի, արտաքին գործերի նախարարի և խորհրդարանի խոսնակի հետ: Կողմերը քննարկել են երկկողմ հարաբերությունների զարգացման, տարածաշրջանային և միջազգային անվտանգությանն առնչվող հարցեր:

Իրանը շարունակում է ինտենսիվորեն զարգացնել տնտեսական կապերը Թուրքիայի հետ: Սակայն պետք է նշել, որ այստեղ հիմնական նախաձեռնողը թուրքական կողմն է: Վերջին տարիներին Թուրքիան տնտեսական գործընկերներ և մեծ շուկաներ է կորցրել, ուստի ջանում է լրացնել այդ բացը: Թուրքական խոշոր ընկերություններից մեկն Իրանի կառավարության հետ ստորագրել է 7 գազային էլեկտրակայան կառուցելու մասին փաստաթուղթ: Ծրագրի արժեքը կազմելու է $4,2 մլրդ, որի աշխատանքները նախատեսվում է մեկնարկել 2017թ. առաջին եռամսյակում: Այս հսկայական ծրագրի իրագործման դեպքում կառուցվելիք 7 կայանները կապահովեն Իրանի էլեկտրաէներգիայի պահանջարկի շուրջ 10%-ը: Երկու երկրների միջև փոխհարաբերություններում այս պահին, թերևս, ամենավիճահարույց հարցն առնչվում է սիրիական ճգնաժամին: Չնայած հրադադարի վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածություններին, Իրանը շարունակում է մեղադրել ինչպես Թուրքիային, այնպես էլ նրա արևմտյան դաշնակիցներին դրանք խախտելու և Սիրիայում ահաբեկիչներին օգնելու մեջ: ՄԱԿ-ում Իրանի ներկայացուցիչ Հոսեյն Դեհղանը կոչ է արել կազմակերպությանը համագործակցել Ասադի կենտրոնական կառավարության հետ սիրիական ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ: Ըստ իրանցի ներկայացուցչի, միայն այդպես հնարավոր կլինի պայքարել Սիրիայում իրավիճակն ապակայունացնող ուժերի դեմ:

Իրան-Հայաստան. Պաշտոնական Երևանը և Թեհրանը շարունակում են ջանքեր գործադրել երկու երկրների միջև տնտեսական կապերի մեծացման ու քաղաքական հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Հունիսի 5-6-ը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնական այցով մեկնել է Իրան: Իրանցի գործընկեր Մոհա-

մադ Ջավադ Զարիֆի հետ հանդիպման ժամանակ Նալբանդյանը շնորհակալություն է հայտնել պաշտոնական Թեհրանին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրում հավասարակշռված դիրքորոշում պահպանելու և հիմնախնդրի կարգավորման գործում միջնորդական առաքելություն ստանձնելու պատրաստակամության համար: Այս հանդիպման շրջանակներում ստորագրվել է երկու երկրների միջև մուտքի արտոնագրի ռեժիմի ազատականացման մասին հուշագիրը: Ըստ այդմ, վերացվում է վիզային ռեժիմը, և երկու երկրների քաղաքացիները կարող են 90 օր առանց հավելյալ փաստաթղթերի գտնվել մյուս երկրում: Սրանով պաշտոնական Երևանն ու Թեհրանը նպատակ ունեն զարգացնել տնտեսական կապերը և զբոսաշրջության ոլորտը: Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարին ընդունել է նաև Իրանի նախագահ Հոսեյն Ռոհանին, որը երկու երկրների միջև հարաբերությունների զարգացման համար կարևորել է նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը: Ռոհանին նաև հայտարարել է առաջիկայում Հայաստան այցելելու մտադրության մասին: Իրանի նախագահը շեշտել է նաև, որ երկու երկրներն ունեն բոլոր ուղղություններով հարաբերությունները զարգացնելու մեծ հնարավորություններ: Ըստ նրա, Հայաստանն ու Իրանը լավ հնարավորություն ունեն զարգացնելու Պարսից ծոց-Սև ծով առևտրային միջանցքը: Նալբանդյանը հանդիպել է նաև Իրանի մեջլիսի խոսնակ Ալի Լարիջանիի հետ: Պաշտոնյաները քննարկել են ինչպես երկկողմ տնտեսական, այնպես էլ Եվրասիական տնտեսական միության և Իրանի միջև կապերի զարգացման հեռանկարներին առնչվող հարցեր: Հանդիպմանը ներկա են գտնվել նաև իրանական օրենսդիր մարմնի երկու հայազգի պատգամավորները: Պաշտոնական այցի երկրորդ օրը Նալբանդյանը հանդիպել է նաև Իրանի փոխնախագահ, միջուկային էներգետիկայի կազմակերպության նախագահ Ալի Աքբար Սալեհիի և ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Ալի Շամխանիի հետ:

Տեղեկանք. Հատկանշական է, որ Իրան-Հայաստան տնտեսական հարաբերություններում ամենաարագ զարգացողը էներգետիկ ոլորտն է: Հայաստանը մեծացնում է Իրանին էլեկտրաէներգիայի մատակարարման ծավալները, որոնք 2017-ին նախատեսվում է հասցնել 1 մլրդ 21 մլն կվտ-ի, ինչը կազմում է Հայաստանում արտադրված էլեկտրաէներգիայի 15%-ը:

Իրանի և Հայաստանի միջև զարգացող հարաբերություններին բավականաչափ նյարդային է արձագանքում պաշտոնական Բաքուն: Մասնավորապես, Ադրբեջանի խորհրդարանի մի քանի ներկայացուցիչներ պաշտոնական Թեհրանի՝ Երևանի հետ հարաբերությունները զարգացնելու և ջերմացնելու ուղղությամբ քայլերը դիտարկում են իբրև Իրան-Ադրբեջան հարաբերությունների զարգացմանը խոչընդոտող հանգամանք: Կարծում ենք, սրա հետ է կապված նաև Գերմանիա կատարած այցից հետո Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությունն այն մասին (լրագրողներին ու փորձագետներին տված հարցազրույցում), որ Ադրբեջանը, ի թիվս այլ երկրների, զենք է գնում նաև Իրանից: Սա առաջին դեպքն է, երբ պաշտոնական Բաքուն խոսում է այս մասին: Սրանով Բաքուն նպատակ ունի սեպ խրել Հայաստանի և Իրանի միջև հարաբերություններում:

Իրան-Արևմուտք. Հունիսի սկզբին ԱՄՆ-ը հրապարակեց ահաբեկչության վերաբերյալ տարեկան զեկույցը, որտեղ Իրանը շարունակում է դասվել ահաբեկչությունը ֆինանսավորող երկրների շարքին: Պաշտոնական Թեհրանը կոշտ արձագանքեց այս զեկույցին՝ փոխադարձ մեղադրանքներ հնչեցնելով Վաշինգտոնի հասցեին Մերձավոր Արևելքում իրավիճակն ապակայունացնելու և ահաբեկիչների դեմ պայքարի իմիտացիա ստեղծելու մեջ: Պաշտոնական Վաշինգտոնն իր հերթին նման հայտարարություններով մեղադրում է Իրանին Սիրիայում անգործության և միայն Ասադի վարչակարգի պահպանմանն ուղղված քայլերի մեջ: Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին իսլամական հանրապետության իշխանության երեք ճյուղերի ղեկավարների հետ հանդիպման ժամանակ ասել է, որ, թեպետ իրենց համար միևնույն է, թե ով կհաղթի ԱՄՆ գալիք ընտրություններում, սակայն եթե ԱՄՆ նոր նախագահը խախտի միջուկային համաձայնագրի կետերը, Իրանն այն չեղյալ կհամարի: Սա առաջին հերթին վերաբերում է ԱՄՆ նախագահի հիմնական հավակնորդներից Թրամփին, որն իր նախընտրական ելույթներում ասում է, որ ԱՄՆ նախագահի պարտականությունների ստանձնումից հետո իր առաջին գործը լինելու է Իրանի հետ ձեռք բերված միջուկային համաձայնագրի չեղարկումը:

Իրանը փորձում է կարգավորել հարաբերությունները Կանադայի հետ, որի արտաքին գործերի նախարար Ստեֆան Դիոնը պաշտոնապես հաստատել է տարածված լուրերն այն մասին, որ Օտտավան սկսել է բանակցություն-

ները Թեհրանի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու ուղղությամբ: Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները սառեցվել էին 2012թ. Կանադայի նախաձեռնությամբ, այն բանից հետո, երբ վերջինս մեղադրեց Իրանին Սիրիային զենք մատակարարելու և միջուկային ծրագրեր իրագործելու մեջ:

Հունիսի 14-15-ին Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում անցկացվեց անվտանգության հարցերով միջազգային կոնֆերանս, որին մասնակցում էր նաև Իրանը: Այստեղ Իրանի և ԱՄՆ արտաքին գերատեսչությունների ղեկավարները քննարկել են միջուկային համաձայնագրի կատարման ընթացքը և Սիրիայում, Եմենում, Լիբիայում, Աֆղանստանում, Ուկրաինայում տիրող իրավիճակը: Միջուկային համաձայնագրի կատարման վերաբերյալ բանակցությունները Զարիֆը շարունակել է Եվրամիության արտաքին հարցերով հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինիի հետ: Զարիֆը Օսլոյում հանդիպել է նաև իր շվեդ գործընկերոջ, Շվեդիայի պառլամենտի խոսնակի և երկրի այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Նա շրջագայել է նաև Գերմանիայում, Ֆրանսիայում և Նիդերլանդներում: Գերմանացի գործընկեր Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հետ հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են ահաբեկչության դեմ պայքարին, Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակին առնչվող հարցեր: Պաշտոնական Բեռլինը պատրաստակամություն է հայտնել զարգացնել Իրանի հետ հարաբերությունները: Իրանը սկսել է որոշակի վստահություն ձեռք բերել Գերմանիայում՝ սկսելով մարել վերջինիս նկատմամբ պարտքը: Մինչ այս պահը պարտքը մարվել է 500 մլն եվրոյի չափով, սակայն պաշտոնական Թեհրանը ծրագրել է մոտ ապագայում ամբողջությամբ մարել Գերմանիային ունեցած պարտքը՝ դրանով խթանելով վերջինիս հետ տնտեսական կապերի զարգացումը: Ֆրանսիա և Նիդերլանդներ կատարած այցի ընթացքում Զարիֆը հանդիպել է երկու երկրների ղեկավարների, իր գործընկերների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հանդիպումների ընթացքում հիմնական թեման եղել են միջուկային համաձայնագրի ստորագրումից հետո ստեղծված հնարավորությունները, որոնք պետք է օգտագործվեն Իրան-Եվրոպա տնտեսական ու քաղաքական հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Իրանը նավթամթերքի մատակարարման շուրջ ակտիվ բանակցություններ է վարում եվրոպական ընկերությունների հետ: Ըստ իրանական պաշտո-

նական աղբյուրների, արդեն հաջողվել է համաձայնագրեր ստորագրել իտալական, իսպանական և հունական ընկերությունների հետ, շարունակվում են բանակցություններն անգլիական նավթային հսկաների հետ:

Իրան-Ասիա. Իրանի արտգործնախարար Զարիֆը մասնակցել է Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում հունիսի 23-24-ին անցկացված Շանհայի համագործակցության կազմակերպության ղեկավարների տարեկան գագաթաժողովին: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն իր ելույթում ասել է, որ Իրանն ամբողջությամբ պատրաստ է կազմակերպությանն անդամակցելուն, իսկ միջուկային համաձայնագրի ստորագրումից հետո այլևս չկան նրա դիմումը մերժելու պատճառներ:

Տեղեկանք. Իրանը 2005 թվականից կազմակերպությունում ունի դիտորդի կարգավիճակ, իսկ 2008-ին անդամակցության հայտ է ներկայացրել: Կազմակերպությանն անդամակցելու համար անհրաժեշտ է անդամ բոլոր պետությունների համաձայնությունը: Իրանի անդամակցության վերաբերյալ համաձայնությունը դեռևս չի տվել Ուզբեկստանը, Ղազախստանը երկմտում է, Ղրղզստանը սպասողական վիճակում է, իսկ Չինաստանն Իրանի անդամակցությունը հնարավոր է համարում միայն Պակիստանի ու Հնդկաստանի մուտքից հետո:

Տաշքենդում Զարիֆը հանդիպումներ է ունեցել ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի և Աֆղանստանի նախագահ Աշրաֆ Ղանիի հետ:

Ռուսաստանը շարունակում է ակնհայտ աջակցություն ցուցաբերել Իրանին ինչպես Շանհայի կազմակերպության անդամակցության հարցում, այնպես էլ տարածաշրջանային անվտանգության հարցերում վերջինիս ձեռնարկումներում: Թեհրան է այցելել Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն, որը հանդիպումներ է ունեցել իրանցի գործընկեր Հոսեյն Դեհղանի և Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Ալի Շամհանի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են ահաբեկչության դեմ պայքարում համատեղ քայլերին, սիրիական ճգնաժամի կարգավորմանն առնչվող հարցեր: Թեհրանում կայացել է նաև եռակողմ հանդիպում Իրանի, Ռուսաստանի և Սիրիայի պաշտպանության նախարարների միջև: Հունիսի երկրորդ կեսին արդեն Մոսկվա այցելեց Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղարը: Վերջինս հանդիպել է Սերգեյ Շոյգուի և ռուս գործընկեր Նիկոլայ Պատրուշևի հետ:

Ասիայի, Օկեանիայի և ԱՊՀ երկրների հարցերով Իրանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Իբրահիմ Ռահիմպուրը հունիսի 3-ին պաշտոնական այցով մեկնել է Մոնղոլիա, որից հետո՝ Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն: Իրանցի դիվանագետը միջանկյալ այցով եղել է նաև Չինաստանում: Ակնհայտ է, որ պաշտոնական Թեհրանը փորձում է զարգացնել տնտեսական և քաղաքական կապերը բոլոր ուղղություններով՝ անկախ այդ երկրներում իշխող վարչակարգերից:

ԹՈՒՐՔԻԱ-ԻՍՐԱՅԵԼ.
ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Հայկ Գաբրիելյան[*]

2010թ. մայիսի 31-ին տեղի ունեցավ Գազայի հատված մեկնող «Ազատության տորմիղի» միջադեպը, որի ժամանակ իսրայելցի հատուկջոկատայինները տորմիղի դրոշակակիր թուրքական «Մավի Մարմարա» նավում սպանեցին 9 թուրքի (2014թ. մահացավ նաև միջադեպի ժամանակ ծանր վիրավորվածներից մեկը), ինչը հանգեցրեց Թուրքիայի և Իսրայելի միջև հարաբերությունների կտրուկ վատթարացմանը: Միջադեպից հետո Թուրքիան 3 նախապայման ներկայացրեց Իսրայելին՝ ներողություն խնդրել, փոխհատուցում վճարել և վերացնել Գազայի հատվածի շրջափակումը՝ ընդգծելով, որ առանց այդ 3 կետի իրագործման թուրք-իսրայելական հարաբերությունների կարգավորում տեղի չի ունենա և Թուրքիայի դեսպանը չի վերադառնա Իսրայել:

2016թ. հունիսի 26-ին հայտնի դարձավ, որ Իսրայելը և Թուրքիան հասել են հարաբերությունների կարգավորման համաձայնության, որը ձեռք է բերվել Հռոմում Իսրայելի և Թուրքիայի ԱԳՆ-ների ներկայացուցիչներ Դորե Գոլդի և Ֆերիդուն Սինիրլիօղլուի հանդիպման ժամանակ[1]: Համաձայնագիրը ստորագրվեց հունիսի 28-ին: Դրանից առաջ թուրքական մամուլում արդեն հրապարակումներ եղել էին, որ երկու երկրները վերջնական համաձայնության են գալու հունիսի 26-ին: Հունիսի 27-ին Թուրքիայի և Իսրայելի վարչապետներ Բինալի Յըլդըրըմը և Բենիամին Նեթանյահուն Հռոմում ներկայացրին համաձայնագրի մանրամասները:

Յըլդըրըմը հայտարարեց. «Իսրայելը $20 մլն-ի փոխհատուցում է վճարելու «Մավի Մարմարայի» միջադեպի ժամանակ զոհվածների ընտանիքներին: Սակայն ամենակարևորն այն է, որ Իսրայելը ներողություն է խնդրել Թուրքիայից միջադեպի համար: Իսրայելը համաձայնել է թույլատրել Գազայի հատված թուրքական հումանիտար օգնություն հասցնելը, և առաջին նավն Իսրայելի Աշդոդ նավահանգիստ կմեկնի օրեր անց՝ իր հետ տանելով 11.000

[*] Թուրքագետ:

[1] Türkiye ile İsrail anlaştı, Sözcü gazetesi, 26.06.2016.

տոննա մարդասիրական օգնություն: Շուտով աշխատանքը կվերսկսեն դեսպանատները: Հարաբերությունների կարգավորումն օգտակար կլինի թե՛ Թուրքիայի, թե՛ Իսրայելի, ինչպես նաև տարածաշրջանի համար: Մենք հավատում ենք դրան»: Յըլդըրըմի խոսքերով՝ Իսրայելն «ընդունել» է Թուրքիայի բոլոր նախապայմանները[2]: Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը նույնպես հայտարարեց, թե Իսրայելը «կատարել» է իրենց բոլոր նախապայմանները[3]: Դա, բնականաբար, այդպես չէ:

Առաջին նախապայմանի մասով նշենք, որ 2013թ. մարտի 22-ին Բենիամին Նեթանյահուն (ԱՄՆ ճնշման ներքո) զանգահարեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանին և ներողություն խնդրեց «Մավի Մարմարայի» միջադեպի համար՝ իր այդ քայլը պատճառաբանելով տարածաշրջանում և, մասնավորապես, Սիրիայում ստեղծված նոր իրավիճակով և կարևորելով Սիրիայի հարևաններ Իսրայելի և Թուրքիայի միջև համագործակցությունը: Ի դեպ, դրանով իսկ Թուրքիան դարձավ առաջին պետությունը, որից Իսրայելը ներողություն է խնդրել իր պատմության ընթացքում: Այստեղ անհրաժեշտ է մեջբերել թուրքական ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) առաջնորդ Քեմալ Քըլըչդարօղլուի խոսքերը, որը համաձայնագրից հետո հայտարարեց, թե Իսրայելը ցայժմ գրավոր ներողություն չի խնդրել Թուրքիայից, մինչդեռ Էրդողանը Պուտինին նամակ է գրում և (գրավոր) ներողություն խնդրում[4]:

Երկրորդ նախապայմանի կատարման մասով հատկանշական է, որ կողմերը ոչինչ չեն հաղորդում փոխհատուցման վճարման կարգավիճակի շուրջ: Դժվար է պատկերացնել, որ Իսրայելի կողմից առաջին նախապայմանի կատարմանը հաջորդած 3 տարիների ընթացքում երկու երկրները չեն կարողացել հստակեցնել փոխհատուցման չափը. մի քանի միլիոն դոլարը այստեղ չէր կարող որոշիչ դեր խաղալ՝ հաշվի առնելով, թե Իսրայելն ու Թուրքիան որքան շատ են զգում միմյանց կարիքը: Իրականում խնդիրը եղել է ոչ թե փոխհատուցման չափի, այլ կարգավիճակի հստակեցումը: Դեռևս 2013թ. հուլիսին (Նեթանյահուի ներողությունից հետո) Թուրքիայի փոխվարչապետ Բյուլենթ Արընչը հայտարարել էր. «Իսրայելը չի ցանկանում իրեն մեղավոր

[2] Binali Yıldırım: İsrail, 20 milyon dolar tazminat ödeyecek, Star gazetesi, 27.06.2016.
[3] Erdoğan'dan İsrail anlaşmasına ilk yorum, Türkiye gazetesi, 27.06.2016.
[4] Kılıçdaroğlu: İsrail'den yazılı bir resmi özür gelmedi, Yeni Hayat gazetesi, 29.06.2016.

ճանաչել կատարած հանցանքում և պահանջում է, որ փոխհատուցման վճարումը գնահատվի որպես գթասրտության կամավոր ակտ և ոչ թե որպես հակահիրավական գործունեության համար վնասի փոխհատուցում, ինչպես որ պահանջում է Թուրքիան: Իսրայելը պետք է «Մավի Մարմարայի» գրավումը ճանաչի որպես հանցանք»:

Թուրքիայի երրորդ նախապայմանն էլ ընդհանրապես չի կատարվել, ինչի մասին վկայում է Նեթանյահուի այն հայտարարությունը, թե Իսրայելը շարունակելու է Գազայի հատվածի ծովային շրջափակումը. «Դա մեզ համար անվտանգության շատ կարևոր խնդիր է: Մենք պատրաստ չենք զիջումների գնալ այդ թեմայով: Դա, ՀԱՄԱՍ-ի ուժը չմեծացնելու հետ մեկտեղ, անհրաժեշտ և առաջնահերթ հարց է մեզ համար: Թուրքիան խոչընդոտելու է իր տարածքներից Իսրայելի դեմ ամեն տիպի ահաբեկչությունների իրականացմանը»[5]:

Մենք տեսնում ենք, որ Իսրայելը, ինչպես և կանխատեսվում էր, չի վերացնելու Գազայի հատվածի ծովային շրջափակումը, քանի որ այն առնչվում է իր ազգային անվտանգությանը, և այդ երկիրը պարզապես չի կարող իրեն թույլ տալ չիմանալ, թե ինչ բեռներ են ուղարկվում Գազայի հատված: Թուրքիայի ներկայացրած այս նախապայմանն իրագործման առումով ամենաբարդն էր, և եթե Թուրքիան այս հարցում հետևողականություն ցուցաբերեր, ապա կողմերի միջև հարաբերությունները դեռ երկար տարիներ կմնային չլուծված:

Թուրքիան հայտարարում է, թե Իսրայելը «թուլացրել» է Գազայի հատվածի շրջափակումը, թույլատրել է, որ թուրքական հումանիտար օգնությունը հասնի Գազայի հատված: Այստեղ թուրքական կողմը չի բարձրաձայնում այն մասին, որ իր հումանիտար օգնությունը նախ պետք է զննման ենթարկվի Իսրայելի նավահանգիստներում և հետո նոր ուղարկվի Գազայի հատված: Երկրորդ՝ «Մավի Մարմարայի» միջադեպից առաջ, երբ թուրք-իսրայելական հարաբերությունները բարձր մակարդակի վրա էին (բացառությամբ վերջին մեկ տարվա), Թուրքիան կարող էր Գազայի հատված հումանիտար բեռներ ուղարկելու հարցով դիմել Իսրայելին և մերժում չէր ստանա:

Անդրադառնանք Թուրքիային Իսրայելի ներկայացրած նախապայմաններին: ԶԼՄ հաղորդմամբ՝ Իսրայելը պահանջում էր, որ Թուրքիայի տարածքում կասեցվի ՀԱՄԱՍ-ի գործունեությունը: Սակայն Թուրքիայի արտգործ-

[5] İsrail Başbakanı Netanyahu: Gazze'ye deniz ablukası sürecek, Hürriyet gazetesi, 27.06.2016.

նախարար Մևլյութ Չավուշօղլուն հերքել է, թե Իսրայելն առաջ է քաշել նման նախապայման[6]: Էրդողանի մամլո քարտուղար Իբրահիմ Քալընի խոսքերով՝ ՀԱՄԱՍ-ը գրասենյակ չունի Ստամբուլում, իսկ նրա առաջնորդ Հալիդ Մաշալը երբեմն գալիս է Թուրքիա, և ճիշտ չի լինի նրա հետ հանդիպումների վայրը փոխելը[7]: Չնայած դրան՝ Իսրայելի համաձայնությունից առաջ Էրդողանը Ստամբուլում հանդիպեց ՀԱՄԱՍ-ի քաղաքական բյուրոյի ղեկավար Հալիդ Մաշալին և քննարկեց թուրք-իսրայելական հարաբերությունների կարգավորման հարցը[8]: Նեթանյահուի վերոնշյալ հայտարարությունը նույնպես վկայում է, որ Թուրքիան պարտավորություններ է ստանձնել ՀԱՄԱՍ-ի մասով (համաձայնագրից օրեր առաջ լրատվամիջոցները հայտնեցին, թե Թուրքիան ու Իսրայելը լուծել են բոլոր խնդիրները՝ բացառությամբ Թուրքիայի տարածքում ՀԱՄԱՍ-ի գործունեությանը վերջ դնելու խնդրի):

Բացի այդ, Իսրայելը պահանջում էր, որ Թուրքիան վերջ դնի իսրայելցի բարձրաստիճան զինվորականների դատական գործընթացներին, որի շուրջ համապատասխան որոշում պետք է ընդունի Թուրքիայի խորհրդարանը: 2014թ. մայիսի 26-ին Ստամբուլի՝ ծանր հանցագործությունները քննող 7-րդ դատարանը «Մավի Մարմարայի» միջադեպի կապակցությամբ որոշեց հեռակա կարգով կալանքի տակ առնել Իսրայելի Գլխավոր շտաբի տվյալ ժամանակվա պետ Գաբի Աշքենազիին, Իսրայելի ռազմածովային ուժերի հրամանատար Էլիեզեր Ալֆրեդ Մարոմին, Իսրայելի ռազմական հետախուզության վարչության ղեկավար Ամոս Յադլինին և Իսրայելի ռազմաօդային ուժերի հետախուզության հրամանատար Ավիշայ Լևիին: 2012թ. մայիսին թուրքական դատախազությունը պահանջել էր իսրայելցի զինվորականներից յուրաքանչյուրին դատապարտել 8578-18.032 տարվա ազատազրկման: Համաձայնագրի ձեռքբերումից հետո Ստամբուլում Իսրայելի գլխավոր հյուպատոս Շաի Քոհենը հայտարարեց, որ իսրայելցի զինվորականների հանդեպ դատական այդ հայցերը չպետք է վերածվեն պատժամիջոցների[9]:

Իսրայելը նաև պահանջում էր, որ Թուրքիան հրաժարվի միջազգային ասպարեզում իր հակաիսրայելական քայլերից և մասնավորապես ՆԱՏՕ-ի հետ հրեական պետության համագործակցությունը տորպեդահարելուց: Նե-

[6] Çavuşoğlu: İsrail ile normalleşmede 'Hamas' diye bir şart yoktur, Posta gazetesi, 22.06.2016.
[7] İbrahim Kalın'dan flaş İsrail ve Rusya açıklaması, Milliyet gazetesi, 22.06.2016.
[8] Cumhurbaşkanı Erdoğan Halid Meşal ile görüştü, CNN Türk, 24.06.2016.
[9] İsrail Başkonsolosu Cohen: Açılan davaların sonunda yaptırım olmayacak, Hürriyet gazetesi, 04.07.2016.

թանյահուն Հռոմում հայտարարեց, որ հարաբերությունների կարգավորման մասին համաձայնագիրը Թուրքիային պարտավորեցնում է աջակցել Իսրայելի ինտեգրմանն այն միջազգային կառույցներին, որոնց անդամ է նա: Նեթանյահուն հասկանալ տվեց, որ երկու երկրների մերձեցումն արդեն հանգեցրել է նրան, որ Անկարան դադարեցրել է Բրյուսելում ՆԱՏՕ շտաբ-բնակարանին կից իսրայելական ներկայացուցչության բացման դեմ առարկությունները (Թուրքիան իր վետոն հանել է 2016թ. մայիսի սկզբին[10]): Փաստորեն, Թուրքիան հետքայլ է կատարել այս հարցում:

Եվ վերջապես, ԶԼՄ-ի համաձայն, Իսրայելը Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու շուրջ բանակցությունների ժամանակ առաջ է քաշել նաև նրա կողմից իրեն շարունակ քննադատելու հարցը՝ կապված Գազայի հատվածի, Արևելյան Երուսաղեմի, Հորդանան գետի Արևմտյան ափի տարատեսակ դեպքերի հետ, որոնք թուրքական կողմն ընկալում է որպես մուսուլմանների իրավունքների ոտնահարում: Հաշվի առնելով, որ մուսուլմանների իրավունքների ինքնահռչակ պաշտպան Թուրքիան նախկինում նման դեպքերի և հատկապես 2014թ. ամռանը Գազայի հատվածի հետ 50-օրյա ռազմական գործողությունների պատճառով բազմիցս խստապես քննադատել է Իսրայելին՝ կարելի է կարծել, որ այն «պարզապես դատապարտված» է հետագայում նույնպես ամեն անգամ քննադատել Իսրայելին, ինչը չի կարող ապահովել դրական մթնոլորտ:

Իսկ ո՞ր գործոնները երկու երկրներին մղեցին գնալու երկկողմ հարաբերությունների կարգավորմանը: Դրանք բազմաթիվ են՝ տնտեսական, քաղաքական, ռազմական:

Տնտեսական. Չնայած վերջին 6 տարում թուրք-իսրայելական հարաբերությունները եղել են բավական սրված, դա չի խանգարել, որ կրկնապատկվի երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալը[11]: Վերջին շրջանում երկու երկրների համար հրատապ էր դարձել գազի խնդիրը: Թուրքիայում նախկինում էլ շարունակ հայտարարություններ էին անում, որ երկրի համար վտանգավոր է Ռուսաստանից գազային մեծ կախվածության մեջ մնալը. Ռուսաստանը Թուրքիայի թիվ մեկ (55%) գազամատակարարն է: Այստեղ նման հայտարարություններն ավելի ուժգնացան 2015թ. աշնանը՝ ռուս-

[10] 'Türkiye, İsrail vetosunu kaldırdı!' NATO'dan da onay çıktı, Milliyet gazetesi, 04.05.2016.
[11] Türkiye-İsrail ticareti iki kat arttı, Samanyolu Haber, 26.11.2015.

թուրքական հարաբերությունների սրացման ֆոնին: Անգամ խոսակցություններ եղան, թե Ռուսաստանը կարող է դադարեցնել գազի մատակարարումը Թուրքիային: Եթե դա տեղի ունենար, ապա դա կնշանակեր Թուրքիայի տնտեսության փլուզում, քանի որ այս փուլում այդ երկիրը պարզապես հնարավորություն չունի խողովակաշարով այլընտրանք գտնել ռուսական գազին. Ադրբեջանից ու Իրանից եկող գազատարները գործում են գրեթե ողջ ծանրաբեռնվածությամբ, մնացյալ բոլոր խողովակաշարերը գտնվում են կա՛մ կառուցման, կա՛մ նախագծման փուլում: Բացի այդ, Թուրքիան ունի գործող մեկ ստորգետնյա գազապաստարան և գազի հեղուկացման երկու տերմինալ, որոնց հզորությունը թույլ չի տա փոխհատուցել ռուսական գազի հնարավոր կորուստը:

Եվ ահա այս ֆոնին այդ երկրի համար էլ ավելի արդիականացավ իսրայելական գազ ներկրելու հարցը, որը որոշակի այլընտրանք կլինի ռուսական գազին և թուրքական մամուլի համաձայն՝ ավելի էժան կլինի ռուսական գազից: Նախ Նեթանյահուն հայտարարեց, որ իսրայելական գազը կարող է Եվրոպային մատակարարվել Թուրքիայի տարածքով, ապա Իսրայելի էներգետիկայի նախարար Յուվալ Շտեյնիցը հայտարարեց, որ իսրայելական գազը կարող է 3 տարում հասնել Թուրքիա, որտեղից էլ՝ *TANAP* գազատարով հասնել Եվրոպա, ինչը լավ կլինի թե՛ Իսրայելի, թե՛ Թուրքիայի համար: Նա ընդգծել է, որ իսրայելական գազը կարող է Թուրքիա հասնել Միջերկրական ծովում կառուցվելիք գազատարով, որի երկարությունը կազմելու է 500-550 կմ, սակայն Թուրքիան դեռ չի տվել համապատասխան թույլտվություն[12]:

Փաստորեն, Թուրքիան կարող է ավելացնել գազամատակարարների թիվը՝ հանձին Իսրայելի, մեծացնելով տվյալ ոլորտում այլընտրանքային դաշտը (իսրայելական գազը պետք է հասցվի Մերսին նահանգ, որտեղ Քրդստանի աշխատավորական կուսակցության (*PKK*) զինյալները քանիցս աչքի են ընկել պայթեցումներ իրականացնելով): Բացի այդ, Թուրքիան կարող է դառնալ տարանցիկ երկիր իսրայելական գազը Եվրոպա հասցնելու համար՝ դրանից բխող դրական բոլոր արդյունքներով (եկամուտներ, սեփական պահանջարկի բարձրացում և այլն): Հեռանկարում Իսրայելից Թուրքիա խողովակաշարի կառուցման դեպքում դրան կարող է միանալ Կիպրոսը, որի գազը նույնպես այդպիսով կհասցվի Թուրքիա, ապա Եվրոպա:

[12] İsrail Enerji Bakanı: İsrail Gazı En Erken 3 Yıla Türkiye'ye Gelecek, Haberler.com, 01.07.2016.

Իսկ ի՞նչն է Իսրայելին մղում իր գազն արտահանել Եվրոպա և դա անել Թուրքիայի տարածքով: Պետք է նշել, որ վերջին տարիներին Իսրայելը գազի խոշոր պաշարներ է հայտնաբերել Միջերկրական ծովում՝ իր բացառիկ տնտեսական գոտում (ԲՏԳ), ինչը ոչ միայն ապահովել է նրա գազային պահանջարկը, այլև հնարավորություն է ընձեռել իրականացնելու մեծ ծավալներով գազի արտահանում: Սակայն այստեղ Իսրայելը բախվել է գնորդ գտնելու խնդրին: Իսրայելի, ինչպես նաև Կիպրոսի համար թիվ մեկ գնորդ էր համարվում Եգիպտոսը (Իսրայելն ու Կիպրոսն այդ հարցում դարձել էին մրցակիցներ), սակայն 2015թ. օգոստոսի վերջին իտալական *ENI* ընկերությունը հայտարարեց Եգիպտոսի ԲՏԳ-ում «Զոհր» գազահանքի հայտնաբերման մասին (850 մլրդ մ^3), որը խոշորագույնն է Միջերկրական ծովի արևելյան հատվածի համար (մինչ այդ խոշորագույնն իսրայելական «Լևիաֆան» գազային հանքավայրն էր՝ 500 մլրդ մ^3):

Դրանից հետո Եգիպտոսը հրաժարվեց իսրայելական (նաև կիպրական) գազ գնելու պլաններից՝ դառնալով գազի առումով անկախ երկիր (հետագայում Եգիպտոսը նոր հանքավայրեր գտնելու դեպքում ինքը կարող է դառնալ գազ արտահանող երկիր): Դա մեծ հարված հասցրեց Իսրայելի ծրագրերին, և Իսրայելում սկսեցին այլընտրանքներ փնտրել: Տարածաշրջանում Թուրքիայից բացի գազի խոշորագույն այլ գնորդ չկա, էլ ավելի կարևորվեց իսրայելական գազը Եվրոպա հասցնելը: Այստեղ Իսրայելն ունի 3 հիմնական տարբերակ.

ա) իր գազը հեղուկացված վիճակում հասցնել Եվրոպա: Սակայն ներկայում Իսրայելը (Կիպրոս) չունի գազի հեղուկացման տերմինալ, որտեղից այն լցանավերով կարող էր հասցվել Իտալիայի և Իսպանիայի գազի հեղուկացման տերմինալներ, իսկ դրանց կառուցումը թանկ արժե: Իսրայելը կարող է դա անել իր գազը Եգիպտոս հասցնելով, որն ունի գազի հեղուկացման տերմինալներ: Սակայն այստեղ էլ խնդիրն իսրայելական գազը Եգիպտոս հասցնելն է. «Զոհրի» հայտնաբերումից հետո արդիականությունը կորցրեց Իսրայելից և/կամ Կիպրոսից Միջերկրական ծովով դեպիԵգիպտոս խողովակաշար անցկացնելը, իսկ գործող ցամաքային գազատարը տասնյակ անգամ պայթեցվել է Սինայի թերակղզում գործող զինյալների կողմից:

բ) Իսրայելն ու Կիպրոսը կարող են իրենց գազը Եվրոպա հասցնել ծովային խողովակաշար կառուցելով (Իսրայել-Կիպրոս-Հունաստան): Սակայն պետք է նկատել, որ այդ դեպքում խողովակաշարը կանցնի սեյսմիկ ակտիվ

գոտով, և բացի այդ, Թուրքիան կարող է խոչընդոտել խողովակաշարի անցկացմանը՝ օգտագործելով ինքնահռչակ Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության (ՀԿԹՀ) և Էգեյան հակամարտությունները:

գ) Իսրայելը կարող է իր գազը Եվրոպա հասցնել Թուրքիայի տարածքով, ինչը նրա համար ամենակարճ ճանապարհն է, այդ թվում նաև կիպրական գազի արտահանման համար:

Քաղաքական. Թուրքիան նախորդ ընթացիկ տասնամյակի սկզբին անցում կատարեց նեոօսմանյան քաղաքականությանը, նրան նման հնարավորություն ընձեռեց երկրի տվյալ ժամանակվա արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուի առաջ քաշած «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականության հաջողությունը: Թուրքիան «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականության շնորհիվ կարողացավ կարգավորել, բարելավել, էլ ավելի սերտացնել հարաբերությունները հարևան երկրների (Հունաստան, Բուլղարիա, Իրան, Սիրիա) հետ, անգամ քայլեր ձեռնարկվեցին Հայաստանի ուղղությամբ: Այդ ամենի շնորհիվ 2010թ. ամերիկյան *Foreign Policy* հեղինակավոր պարբերականը Դավութօղլուին ճանաչեց տարվա լավագույն դիվանագետներից մեկը՝ «Նոր Քիսինջեր», որի խոսքերն են. «Երբ մենք հասնենք մեր հարևանների հետ զրո խնդիր մակարդակի, այդ ժամանակ արտաքին քաղաքականություն վարելու առումով կստանանք վերին աստիճանի լայն մանևրելու դաշտ»: Թուրքիան, Դավութօղլուի ջանքերի շնորհիվ մեծապես կարգավորելով հարևանների հետ հարաբերությունները, նախ ստացավ լայն մանևրելու դաշտ, ապա ընթացիկ տասնամյակում անցում կատարեց նեոօսմանիզմին (տարիներ առաջ Դավութօղլուն հայտարարել էր, որ Թուրքիան հարկադրված է զբաղվել իր հարևաններով, քանի որ քարտեզի վրա Թուրքիայի շուրջ 1000 կմ տրամագծով շրջանագիծ գծելու դեպքում դրա ներսում կհայտնվի 20 երկիր, իսկ 3000 կմ տրամագծով շրջանագիծ գծելու դեպքում՝ 70 երկիր):

Այդպիսով, Թուրքիան մեծացրեց իր հանդեպ անբարյացակամ տրամադրված երկրների թիվը, որոնք սկսեցին նրան էլ ավելի շատ մեղադրել իրենց ներքին գործերին միջամտելու համար: Դրան նպաստեց նաև «Արաբական գարունը», և տարածաշրջանային գերտերության դերին հավակնող Թուրքիան պարզապես չէր կարող անտեսել այդ դեպքերը, չարտահայտվել դրանց կապակցությամբ, ինչն էլ ենթադրում էր հարաբերությունների բարելավում կամ վատթարացում այդ երկրների հետ՝ կախված նրանց ներքին զարգացումներից:

Այժմ հասունացել է Թուրքիայի արտաքին քաղաքականությունը որոշակիորեն փոխելու և գոնե ժամանակավորապես «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությանը վերադառնալու ժամանակաշրջանը՝ վերականգնելու համար քաղաքական մանևրի դաշտը (Սիրիայում գործող ահաբեկչական խմբավորումներին մեծապես աջակցող Թուրքիան «հաջողացրել» է ուղղակիորեն և անուղղակիորեն «ահաբեկչությանն աջակցելու մեջ» մեղադրել թե՛ Ռուսաստանին (*PKK*-ին զենքի մատակարարում), թե՛ ԱՄՆ-ին (Սիրիայի քրդերի «ահաբեկչական» Դեմոկրատական միություն կուսակցության հետ համագործակցում), թե՛ ԵՄ-ին (սեփական հակաահաբեկչական օրենսդրությունը փոխելու պահանջը հավասարեցնել ահաբեկչությանն աջակցելուն) և հետագայում արտաքին ակտիվ քաղաքականությանը վերստին անցում կատարելու համար:

Եթե նախկինում Թուրքիան լավ հարաբերությունների մեջ էր Իսրայելի հետ և դրանով հարուցում էր արաբական աշխարհի դժգոհությունը, ապա նեոօսմանիզմին անցում կատարելու շրջանակներում որոշվեց ստանալ հակառակ պատկերը՝ վատթարացնել հարաբերություններն Իսրայելի հետ և շահել արաբական աշխարհի համակրանքը: Այդ նպատակին ծառայեցին 2009թ. Դավոսի միջադեպը (Էրդողանի բոյկոտը), 2010թ. հունվարին «աթոռային ճգնաժամը» (Իսրայելում թուրք դեսպանին ավելի ցածր աթոռի վրա նստեցնելը) և «Մավի Մարմարայի» միջադեպը: Նախկինում թուրքական մամուլը գրել է, որ Էրդողանը մասնակցել է Գազա «Ազատության տորմիղի» ուղարկմանը, ինչը պետք է նպաստեր Իսրայելի հետ հարաբերությունների վատթարացմանը և Թուրքիայի՝ իսլամական աշխարհի առաջնորդ դառնալուն: Իսրայելի հետ համաձայնագրից հետո թուրքական մամուլը գրեց, որ Էրդողանը «Մավի Մարմարայի» միջադեպի հարցում հակասել է իրեն. 2016թ. հունիսի 29-ին նա հայտարարել է, որ իրենք կապ չեն ունեցել Գազայի հատված «Մավի Մարմարայի» ուղարկման հետ և չեն տվել նման թույլտվություն: Մինչդեռ 2014թ. հուլիսի 17-ին Էրդողանը (Թուրքիայի վարչապետ) հայտարարել էր, որ այն ժամանակ իշխանությունն իրենք էին և «Մավի Մարմարային» տվել են նման թույլտվություն[13]:

Թուրքիայի նոր վարչապետ Բինալի Յըլդըրըմն արդեն մի քանի անգամ հայտարարել է, որ իրենք ձգտելու են նվազեցնել թշնամի երկրների և ավե-

[13] Erdoğan'dan 2014: Mavi Marmara'ya izni biz verdik, T24, 30.06.2016.

լացնել բարեկամ երկրների թիվը՝ ընդգծելով, որ հավերժ թշնամիներ չեն լինում: Թվում է, թե Թուրքիայի արտաքին քաղաքականությունում կատարվող փոփոխությունները (Ռուսաստանի, Իսրայելի, ինչպես նաև Եգիպտոսի ու Իրաքի մասով) պայմանավորված են Յըլդըրըմի անձով, սակայն իրականում ամեն ինչ որոշում է Էրդողանը, որը վերջապես հասկացավ, որ իր երկրի համար ընտրել է սխալ և կործանարար ուղի, որ պետք է ընդունել սխալները, որոշ հարցերում հետքայլ կատարել և հրաժարվել հետևողական քաղաքականությունից՝ այն փոխարինելով ճկուն քաղաքականությամբ:

Այս ամենը հիշեցնում է Իրանի օրինակը, որտեղ նման փոփոխություններ գրանցվեցին նախագահի պաշտոնում Հասան Ռոհանիի ընտրվելուց հետո. Իրանը սկսեց զիջումների գնալ իր միջուկային ծրագրի հարցում, զերծ մնալ նախկին կոշտ հայտարարություններից, ինչը դժվար է կապել Ռոհանիի անվան հետ, քանի որ նման հարցերը որոշում է երկրի գերագույն և հոգևոր առաջնորդ, այաթոլա Ալի Խամենեին, որը, ըստ ամենայնի, հասկացել էր, որ ավելի օգտակար է միջուկային զենք ստեղծելուց թեկուզ ժամանակավորապես հրաժարվելը և փոխարենը պատժամիջոցների վերացում ստանալը, ինչի շնորհիվ Իրանը կկարողանա զարգացնել իր տնտեսությունը և էլ ավելի մեծ ակտիվություն ցուցաբերել տարածաշրջանում:

Թուրքիան վերջին շրջանում հարաբերությունները վատթարացրել է արաբական աշխարհի կարկառուն ներկայացուցիչների՝ Եգիպտոսի, Սիրիայի, ինչպես նաև Իրաքի հետ, Լիբիայում քառասային իրավիճակ է, Կատարի ու Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունները շարունակում են մնալ բարձր մակարդակի վրա, որոնց համար Իրանն ավելի մեծ խնդիր է, քան Իսրայելը: Այս ամենը նույնպես նպաստում է, որ Թուրքիան գնա Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորմանը և նրանց միջև սկսվի լիովին նոր ժամանակաշրջան:

Թուրքիան ու Իսրայելն այժմ կարող են համատեղ գործել ընդդեմ Իրանի և Սիրիայի (Մոսադի նախկին ղեկավար Իբրահիմ Հալևին գարնանը հայտարարեց, որ «Ջաբհաթ ան-Նուսրայի» զինյալները բուժում են ստանում Իսրայելի հիվանդանոցներում), ինչպես նաև *PKK*-ի դեմ: Այժմ Էրդողանը կկարողանա կատարել վաղեմի ցանկությունը և Իսրայելի թույլտվությամբ այցելել Գազայի հատված (ավելի վաղ Էրդողանը ցանկանում էր Գազա մեկնել Եգիպտոսի տարածքով, սակայն այդ երկրի նախագահ Մոհամեդ Մուրսիին իշխանու-

թյունից հեռացնելը խաչ քաշեց այդ ծրագրերի վրա): Թուրքիան այժմ կփորձի Իսրայելի միջոցով ազդել Սիրիայի քրդերի հարցում ԱՄՆ դիրքորոշման վրա, որոնց հաղթարշավը շատ է վախեցնում Անկարային:

Հետաքրքիր կլինի հետևել նաև թուրք-իսրայելական հարաբերությունների կարգավորման համատեքստում Իսրայելի հետ սերտ հարաբերություններ ունեցող Հունաստանի ու Կիպրոսի արձագանքներին և Թուրքիայի հետ սերտ հարաբերություններ ունեցող արաբական աշխարհի արձագանքներին (համարվում է, որ Թուրքիան արաբական աշխարհին առաջին անգամ դավաճանել է 1949թ.՝ ճանաչելով Իսրայելը, իսկ երկրորդ անգամ՝ 1990-ականներին՝ Իսրայելի հետ հարաբերությունների բավական սերտացմամբ): ԱՄՆ-ում հրեական լոբբին նույնպես կարող է օգտակար լինել Թուրքիային, այդ թվում նաև Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերի դեմ պայքարի համար: Բացի այդ, Թուրքիան կփորձի Նեթանյահուի կառավարության միջոցով ազդել Քնեսեթի վրա՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև չընդունելու համար:

Ռազմական. Չնայած վերջին տարիներին թուրք-իսրայելական հարաբերությունների կտրուկ վատթարացմանը՝ երկու երկրների ռազմական գերատեսչությունների և հատուկ ծառայությունների շփումները շարունակվել են: 2013թ. ամռանն Իսրայելի ՊՆ Զենքի արտահանման վարչության (*SIBAT*) պետ Շեմայա Ավիելիին, խոսելով թուրք-իսրայելական ճգնաժամի մասին, հայտարարեց. «Մեր կողմից Թուրքիա զենքի արտահանումը երբեք կանգ չի առել, այն շարունակվել է՝ Իսրայել պետության շահերի պաշտպանությամբ: Միանգամայն ճիշտ է, որ նախորդ տարիների հարաբերությունները նույն կերպ չեն շարունակվում, սակայն, եթե հայացք նետենք թվերին, ապա կտեսնենք, որ Թուրքիա կատարվող զենքի արտահանումը երբեք 0 չի եղել: Զենքի արտահանումն այդ երկիր շարունակվում է նախկին պայմանագրերի շրջանակներում: Զենքի գնման այլ առաջարկներ էլ կան Թուրքիայից, դրանք ուսումնասիրվում են»[14]:

Հարաբերությունների վատթարացման ժամանակ շարունակվել են Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (*MIT*) և իսրայելական «Մոսադ» արտաքին հետախուզության միջև շփումները: Օրինակ, 2013թ.

[14] İsrail'in Türkiye'ye silah satışı hiçbir zaman durmadı!, Radikal gazetesi, 24.07.2013.

հունիսին «Մոսադի» նախկին ղեկավար Թամիր Փարդոն այցելել է Թուրքիա և հանդիպել է *MIT* ղեկավար Հաքան Ֆիդանի հետ[15]: Բացի այդ, հաղորդվել էր, որ «Մոսադի» նոր ղեկավար Յոսի Քոհենը պետք է այս տարվա գարնանը ժամաներ Ստամբուլ՝ հանդիպելու Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի և Կատարի արտգործնախարարների հետ, որոնք պետք է մասնակցեին ԻՀԿ 13-րդ գագաթաժողովին[16]:

Թուրքիայի և Իսրայելի միջև հարաբերությունների կարգավորումը դրականորեն կանդրադառնա նաև ռազմական ոլորտում նրանց համագործակցության վրա: Թուրքիան կարող է Իսրայելի օգնությամբ զգալիորեն մեծացնել իր հետախուզական պոտենցիալը: Ընդ որում՝ խոսքը ոչ միայն Իսրայելից նոր անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ), էլեկտրոնային պայքարի սարքեր գնելու (նախորդ տարեվերջին հաղորդվել էր, որ Թուրքիան շահագրգռված է Իսրայելից գնել նոր ԱԹՍ-ներ), այլև հետախուզական տվյալներ փոխանակելու մասին է: 2012թ. «Թյուրքսամ» միջազգային հարաբերությունների և ռազմավարական վերլուծությունների կենտրոնի փոխնախագահ, դոկտոր, պրոֆեսոր Ջելալեթթին Յավուզը հայտարարել էր, որ Թուրքիան *PKK*-ի դեմ պայքարում զգում է «Մոսադի» կարիքը: Թուրքիան և Իսրայելը կարող են վերսկսել համատեղ զորավարժությունները, որոնց կարող է միանալ նաև Ադրբեջանը: Թուրքիան կարող է կապող օղակ դառնալ Իսրայելի և Ադրբեջանի միջև և էլ ավելի նպաստել նրանց հարաբերությունների խորացմանը («Իսրայել-Թուրքիա-Ադրբեջան» եռանկյունի):

[15] MOSSAD Başkanı Tamir Pardo İstanbul'a geldi, En Son Haber, 12.06.2013.
[16] Mossad Başkanı Türkiye'de kimle görüşecek, Tasnim haber ajansı, 14.04.2016.

ԱԴՐԲԵՋԱՆ-ԻՍՐԱՅԵԼ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Կարեն Վերանյան[*]

Իսրայելական պաշտպանական ընկերությունները

Իսրայելն աշխարհի զարգացած ռազմարդյունաբերական համալիր ունեցող երկրներից մեկն է: Մինչ Իսրայել պետության հիմադրումը՝ 1948թ., գործում էին հրեական պաշտպանական նշանակության որոշ ընկերություններ, որոնք մասնագիտացած էին սպառազինությունների մշակման և արտադրման գործում:

Իսրայելի ռազմարդյունաբերության ոլորտի պետական խոշոր ընկերություններից կարելի է առանձնացնել 3 կորպորացիա՝ *Israel Aerospace Industries, Israel Military Industries* և գիտաարտադրական «Ռաֆայել» վարչությունը (*Rafael Armament Development Authority of Israel*)[1]:

Israel Aerospace Industries (*IAI*) պաշտպանական ընկերությունը հիմնադրվել է 1953թ., մասնագիտացած է ավիացիոն-տիեզերական, պաշտպանական արտադրության ոլորտներում: Ընկերության գործունեությունն իրականացվում է հրթիռատիեզերական և ավիացիոն տեխնիկայի, ՀՕՊ համակարգերի, էլեկտրոնային-օպտիկական, էլեկտրամեխանիկական սարքավորումների ոլորտում հետազոտությունների կազմակերպման, մշակման, արտադրության, սպասարկման և վաճառքի ուղղություններով: Կազմակերպությունն արտադրում է նաև ռազմական և քաղաքացիական ավիատիեզերական ապարատներ, արբանյակներ: Աշխատակիցների թվաքանակը՝ մոտ 16.000:

Ընկերության դուստր կազմակերպություններից է *ELTA Systems*-ը: Տարբեր տվյալներով՝ *Israel Aerospace Industries* ընկերության վաճառքի ծավալները կազմում են տարեկան ավելի քան $3,3 մլրդ: Արտադրանքի շուրջ 80%-ն արտահանվում է համաշխարհային շուկա, 20%-ը բաժին է ընկնում ներքին սպառմանը: Ընդ որում՝ ընկերության ողջ արտադրանքի 65%-ը ռազմական

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ:

[1] http://www.iimes.ru/rus/stat/2004/11-10-04.htm

նշանակության արտադրանք է: Իրականացնում է նաև ավիացիոն տեխնիկայի տարբեր տեսակների մշակման և արդիականացման աշխատանքներ: Մասնագիտացած է նաև ավելի քան 1 տասնյակ անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) նախագծման, արտադրության ոլորտներում: Ընկերությունն արտադրում է հետևյալ տեսակի ԱԹՍ-ները.

- IAI E-HUNTER — տակտիկական, հետախուզական ԱԹՍ
- RQ-5 Hunter — տակտիկական, հետախուզական ԱԹՍ
- IAI Eitan — ծանր հետախուզական և հարվածային ԱԹՍ
- IAI HARPY — հակառադիոլոկացիոն ԱԹՍ
- IAI RANGER — տակտիկական, հետախուզական ԱԹՍ
- IAI Scout — տակտիկական, հետախուզական ԱԹՍ
- IAI SEARCHER — տակտիկական, հետախուզական ԱԹՍ
- IAI SEARCHER II — տակտիկական, հետախուզական ԱԹՍ
- IAI, RUAG, Oerlikon ADS 95 RANGER — հետախուզական ԱԹՍ
- IAI Heron — հեռահար հետախուզական ԱԹՍ
- IAI Bird-Eye 400 — փոքր ԱԹՍ
- Ghost — գերփոքր տակտիկական հետախուզական ԱԹՍ:

Israel Aerospace Industries-ը հայտնի է նաև ռմբակոծիչների, հրթիռային սպառազինության նախագծմամբ և արտադրությամբ: Դրանցից են.

Ռմբակոծիչներ

- IAI Nesher;
- IAI Kfir «Кфир» — բոլոր եղանակային պայմանների համար բազմանպատակային ռմբակոծիչ

Հրթիռային սպառազինություն

- IAI Jumper — տակտիկական հրթիռային համակարգ

Israel Military Industries (*IMI*) ընկերությունն Իսրայելի խոշոր պետական պաշտպանական կորպորացիաներից մեկն է, մասնագիտացած է սպառազինությունների համակարգերի, զինամթերքի, հրթիռային համակարգերի և զրահատեխնիկայի արտադրության մեջ: Հիմնադրվել է 1933թ.՝ մինչև Իսրայել պետության ստեղծումը, հանդիսանալով տարածաշրջանում սպառազինու-

թյունների արտադրության առաջին արտադրողը: Մինչև 2013թ. մասնավոր կազմակերպություն էր, և միայն 2013թ. Իսրայելի կառավարությունը հաստատեց կոնցեռնի սեփականաշնորհման մասին համաձայնագիրը:

Ընկերությունն ունի 3800 աշխատակից: Արտադրանքի ավելի քան 60%-ն արտահանվում է միջազգային շուկա: Ընդ որում՝ դրա միայն 10%-ն է քաղաքացիական նշանակության: Արտադրում է հրաձգային և հրետանային սպառազինություն, զրահատեխնիկա, ռազմամթերքի բոլոր տեսակները, հրթիռային համակարգերի արձակման կայաններ, կառավարման համակարգեր, ռադիոէլեկտրոնային տեխնիկա և այլն:

Rafael Armament Development Authority of Israel ընկերությունն Իսրայելի սպառազինությունների արտահանման խոշոր կազմակերպություններից է: Հիմնադրվել է 1948թ. և սկզբնական շրջանում կրում էր *HEMED* անունը, 1958թ. վերանվանվեց *RAFAEL*:

2010թ. վիճակագրությամբ՝ կազմակերպության՝ վաճառքից ստացված ընդհանուր եկամուտները կազմում էին $1,056 մլրդ: Այն ներառվել է զենքի ոլորտում ներգրավված աշխարհի խոշոր 100 կազմակերպությունների ցուցակում՝ զբաղեցնելով 49-րդ դիրքը՝ ըստ վաճառքից ստացված շահույթի[2]: Ընկերության հետազոտությունների հիմնական ոլորտներից են հրթիռային և ավիացիոն տեխնոլոգիաները, ՀՕՊ համակարգերը, տակտիկական հրթիռային զինատեսակները:

Իսրայելական *Aeronautics Defense Systems Ltd.* (նախկինում՝ *NETS Integrated Avionics Systems*) ընկերությունը հիմնադրվել է 1997թ.: Մասնագիտացած է սպառազինությունների համակարգերի և միջոցների, մասնավորապես՝ ռազմական և առևտրային ԱԹՍ-ների, անվտանգության ապահովման համակարգերի մշակման և արտադրման մեջ: Իրականացնում է նաև խորհրդատվական ծառայություններ: Հիմնականում գործունեությունն ուղղված է արտաքին շուկային: 2012թ. մայիսի դրությամբ ընկերության արտադրած ԱԹՍ-ները մատակարարվել էին աշխարհի 14 պետությունների: Գլխավոր գրասենյակը գտնվում է Իսրայելի Յավնե քաղաքում:

Ընկերության արտադրած ռազմական նշանակության ԱԹՍ-ներից կարելի է առանձնացնել *Defense Dominator, Aerostar, Aerolight, Orbiter, Seastar* տեսակները:

[2] https://ru.wikipedia.org/wiki/Rafael

Ընկերությունը նախագծել և արտադրել է կառավարման, հետախուզության, դիտարկման և թիրախների խոցման հետևյալ միջոցները.

- ցամաքային համակարգեր (Ground ISR Solutions, GISR)
- օդային համակարգեր (Aerial ISR Solutions (AISR)
- ԱԹ համակարգեր
- Կառավարման ցամաքային կենտրոն (GCS) և այլն[3]:

Elbit Systems իսրայելական պաշտպանական ընկերությունը հիմնադրվել է 1967թ., մասնագիտացած է էլեկտրահաղորդակցության, հեռահաղորդակցության, ավիացիայի և ռազմական այլ ոլորտներում: Իրականացնում է պաշտպանական ոլորտի սպառազինությունների՝ ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցների, ԱԹՍ-ների, ռադիոլոկացիոն կայանների արտադրություն, ինչպես նաև ավիացիայի, ռադիոլոկացիոն համակարգերի, հրետանային համակարգերում դիտարկման և հրթիռային տեխնիկայի մշակումներ:

Դուստր ձեռնարկություններից են *Elbit Systems of America*-ն, *Tadiran Communication Ltd.*-ն, *Electro-Optics Elop Ltd.*-ն, *Elisra*-ն և այլն[4]:

Elbit Systems-ը զգալի հաջողություններ է արձանագրել նաև խորհրդային մարտական հնացած տեխնիկայի տեսակների արդիականացման ուղղությամբ:

Ընկերությունը տեղակայվում է Հայֆա քաղաքում: Հիմնական գործընկերներից են Եվրոպայի և ԱՄՆ ընկերությունները: 2010թ. վիճակագրությամբ՝ ընկերության եկամուտները կազմել են $2 մլրդ 670 մլն:

ELTA Systems Ltd իսրայելական ընկերությունն արտադրում է պաշտպանական արտադրանք, մասնագիտացած է ռադիոլոկացիոն միջոցների, ռադիոկապի, ռադիոէլեկտրոնային հետախուզության, ռադիոէլեկտրոնային հակազդման ոլորտներում: Ինչպես նշվեց, *Elta*-ն իսրայելական խոշոր ընկերություններից մեկի՝ *Israel Aerospace Industries* ընկերության դուստր կազմակերպությունն է: Հիմնադրվել է 1967թ.: 2006թ. վաճառել է $805 մլն ընդհանուր արժողությամբ պաշտպանական արտադրանք, որի 90%-ն արտահանվել է աշխարհի ավելի քան 50 երկիր:

Tadiran Ltd. իսրայելական ընկերությունը հիմնադրվել է 1958թ.՝ Իսրայելի ռազմարդյունաբերական համալիրի կազմում: Արտադրանքի հիմնական

[3] https://ru.wikipedia.org/wiki/Aeronautics_Defense_Systems
[4] http://ru.rfwiki.org/wiki/Elbit_Systems

մասն արտահանվում էր ԱՄՆ շուկա: Այն իրականացնում էր ռազմական նշանակության հեռահաղորդակցային տեխնիկայի, կապի միջոցների, սնուցման տարբեր տարրերի արտադրություն: Հետագայում կոնցեռնի ենթաբաժինները վաճառվեցին մաս առ մաս: *Tadiran Communications Ltd* ենթակառուցվածքը, որը զբաղվում էր ռազմական նշանակության ապարատների և սարքավորումների արտադրությամբ, 2008թ. հունիսի 1-ին վաճառվեց *Elbit Systems* ընկերությանը[5]:

Ադրբեջան-Իսրայել ռազմատեխնիկական համագործակցության հարցի շուրջ

Վերջին տասնամյակում Ադրբեջանի և Իսրայելի միջև ռազմական, ռազմատեխնիկական համագործակցությունը զարգանում է արագ տեմպերով: Մեր հարևան պետության զինված ուժերի սպառազինության և ռազմական տեխնիկայի համալրման գործընթացին վերջին տարիներին ակտիվորեն ներգրավվել են իսրայելական խոշոր պաշտպանական ընկերություններն ու կազմակերպությունները: Հատկապես շատ է խոսվում իսրայելական արտադրության տարբեր տեսակի ԱԹՍ-ների մասին, որոնք ադրբեջանական կողմն ակտիվորեն կիրառեց ս.թ. ապրիլյան պատերազմի ընթացքում:

Հայտնի է, որ ԱԹՍ-ների նախագծման և արտադրության ոլորտում Իսրայելն ունի միջազգային հեղինակություն, ինչի մասին խոսում են նաև ստորև բերված վիճակագրական տվյալները: *SIPRI* ինստիտուտի տվյալներով՝ 2001-2011թթ. Իսրայելը վերահսկում էր ԱԹՍ-ների համաշխարհային շուկայի 41%-ը: 2008թ. այդ երկիրն արտաքին շուկայում վաճառել է շուրջ $150 մլն ընդհանուր արժողության ԱԹՍ-ներ, իսկ արդեն 2009թ.՝ $650 մլն, 2010թ.՝ $979 մլն: 2005-2013թթ. Իսրայելը ԱԹՍ-ներ է արտահանել աշխարհի տարբեր երկրներ՝ $4,6 մլրդ ընդհանուր արժողությամբ, ինչը կազմում է իսրայելական սպառազինության ընդհանուր արտահանման 10%-ը:

Իսրայելական ԱԹՍ-ների արտահանման վարկավորումն իրականացվում է որոշ դեպքերում ուղղակի (ինչպես, օրինակ, դեպի Գերմանիա, Նիդեռլանդներ, Կանադա), ինչպես նաև երրորդ կողմի միջնորդությամբ (օրինակ, Ինդոնեզիան այդ նպատակների համար որպես միջնորդ օգտվում է ֆիլիպինյան ընկերության ծառայություններից, Ֆինլանդիան՝ շվեյցարական):

[5] https://ru.wikipedia.org/wiki/Tadiran_Ltd

ԱԹՍ-ների գծով մասնագիտացած իսրայելական խոշոր ընկերություններն իրականացնում են նաև ուսուցման, վերապատրաստման և մասնագիտացման դասընթացներ արտաքին շուկայի ներկայացուցիչների համար: Մասնավորապես, 1990թ. չինացի մասնագետներն իսրայելական տեխնոլոգիաների գծով *Israel Aerospace Industries* ընկերության շրջանակներում ուսուցման դասընթացներ անցան:

Առավել մանրամասն ներկայացնենք Իսրայել-Ադրբեջան ռազմատեխնիկական համագործակցության ոլորտը: Այսպես, 2004թ. Ադրբեջանի և Իսրայելի միջև ստորագրվեց պայմանագիր Թուրքիայում արտադրված իսրայելական սպառազինությունների Ադրբեջան մատակարարումների ապահովման վերաբերյալ: Որոշ տվյալներով՝ 2008թ. երկու երկրների միջև ստորագրված համաձայնագրի համաձայն, իսրայելական *Soltam* պաշտպանական ընկերությունը նախատեսում էր Ադրբեջանին ապահովել ականանետերի և ռազմամթերքի մատակարարումներով, *Tadiran Communications* ընկերությունը՝ կապի միջոցներով, *Israel Military Industries*-ը՝ հրթիռների և կառավարման համակարգերի լայն սպեկտրով:

2009թ. սեպտեմբերի կեսերին իսրայելական պաշտպանական *Elbit Systems* ընկերությունն Ադրբեջանում բացեց իր ներկայացուցչությունը և սկսեց ԱԹՍ-ների արտադրության համատեղ նախագիծ իրականացնել Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության հետ: Նշենք նաև, որ Ադրբեջանի ղեկավարությունը պատրաստվում էր նման տեխնիկա արտադրել այդ ոլորտում համաշխարհային առաջատար *Aeronautics* ընկերության հետ: Կողմերի միջև պայմանավորվածությունը ձեռք բերվեց 2009թ. հունիսին՝ Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի գլխավորությամբ իսրայելական պատվիրակության Ադրբեջան կատարած այցի ընթացքում:

Aeronautics ընկերությունը նախատեսում էր Ադրբեջանում հիմնել սեփական ռազմարդյունաբերական գործարան: Արդեն 2009թ. կեսերին Ադրբեջանում ԱԹՍ արտադրության հարցում ներգրավված էր 2 խոշոր իսրայելական ընկերություն: Հարկ է նշել, որ 2009թ. հունիսին Շիմոն Պերեսի Ադրբեջան այցի ընթացքում պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ իսրայելական մեկ այլ պաշտպանական ընկերություն՝ *Elta Systems Ltd*-ն, համագործակցելու է Ադրբեջանի հետ արբանյակային համակարգի ստեղծման ոլորտում:

Ի դեպ, 2009թ. կեսերին իսրայելական այդ ընկերությունը հայտարարել էր *TecSAR* արբանյակի ստեղծման մասին, որը կրում է ռադար՝ սինթեզված սարքավորմամբ, ինչը թույլ է տալիս բարձրորակ պատկերներ ստանալ անկախ եղանակային պայմաններից: Հարկ է նշել, որ սա բավական արդյունավետ տեխնիկա է լեռնային տեղանքում ռազմական գործողությունների վարման համար:

Այցի ընթացքում կողմերի միջև պայմանավորվածություն էր ձեռք բերվել սկսել ևս մեկ համատեղ նախագիծ՝ իսրայելական «Նամեռ» տեսակի ՀՄՄ-ի հատուկ մոդիֆիկացման արտադրության նպատակով: Այս զրահամեքենան հագեցած է զրահավորման նոր և բազմակի հնարավորություններով, որը թույլ է տալիս այն ամբողջովին պաշտպանել բոլոր կողմերից, այդ թվում և հատակի հատվածից: Զրահամեքենայի առջևի հատվածում տեղադրված շարժիչն ապահովում է հավելյալ պաշտպանություն հակատանկային նռնակներից և հրթիռներից: Զրահամեքենան կարող է տեղափոխել 12 մարդ, ունի զնդացիր և նռնականետ:

Պայմանավորվածություն էր ձեռք բերվել նաև Ադրբեջանին նորագույն Տավոր (*TAR-21*) տեսակի ինքնաձիգների, *Tadiran* ընկերության արտադրած կապի համակարգերի, *Soltam* ընկերության արտադրած հաուբիցների և ռազմամթերքի, ինչպես նաև *IMI* պետկոնցեռնի արտադրած հրթիռահրետանային համակարգերի մատակարարումների մասին:

Անդրադառնանք իսրայելական արտադրության *ATMOS* 2000 տեսակի ինքնագնաց հրետանային կայանին: Սա հաուբից է, որը նախատեսվում է կենդանի ուժի, հրետանային համակարգերի ոչնչացման, ինչպես նաև ականապատված դաշտերում անցումների կամ միջանցքների ապահովման համար: Սկզբնական փուլում տվյալ հրետանային համակարգի մշակումն իրականացվում էր իսրայելական *Soltam* ընկերության կողմից, որը հետագայում դարձավ իսրայելական մեկ այլ պաշտպանական ընկերության՝ *Elbit Systems*-ի մասը:

Հատկանշական է, որ հրետանային այս համակարգը սկզբում նախատեսված էր արտահանման համար, միայն 2006թ. այն կիրառություն գտավ նաև Իսրայելի պաշտպանության բանակում: Ներկայում այս համակարգից ունեն Ռումինիայի, Ուգանդայի, Թաիլանդի, Կամերունի, իսկ 2013թ. սկսած՝

նաև Ադրբեջանի զինված ուժերը (վերջինի պարագայում խոսվում էր *M46* տեսակի (130մմ-անոց) 5 միավոր հրետանային համակարգի մասին)։

Նշենք, որ *ATMOS* 2000 հրետանային համակարգի արտադրության մեջ շեշտադրումը կատարվել է այդ համակարգի շարժունակության արդյունավետության բարձրացման վրա, այն հեշտ է բերվում մարտական պատրաստվածության վիճակի, անսարքությունների դեպքում դրանք կարելի է վերացնել հենց դաշտային պայմաններում։ *ATMOS* 2000 հաշվարկի կազմում ներառվում է 4-6 մարդ։

Ներկայացնենք նաև իսրայելական *Rafael* պաշտպանական ընկերության արտադրած *Spike LR* տեսակի հակատանկային հրթիռային համալիրը։ Բաց աղբյուրների համաձայն՝ 2009-2011թթ. Ադրբեջանի զինված ուժերը համալրվել են այս տեսակի 100 միավոր հակատանկային հրթիռային համալիրներով։ *Spike LR* տեսակի հակատանկային հրթիռային համակարգը 4-րդ սերնդի արտադրանք է՝ ինքնակառավարվող ջերմատեսանելիության համակարգով։

Spike LR համակարգը հեռահար մարտական զինատեսակ է, որը կարող է թիրախներ խոցել մինչև 4000 մ հեռավորության վրա և նախատեսված է ինչպես շարժական, այնպես էլ անշարժ թիրախների խոցման համար. զրահատեխնիկա, շինություններ, ինժեներական կառույցներ։ *Spike LR* համակարգը հեշտ կիրառելի է, արդյունավետ, ոչ ավելի, քան 1 րոպեում բերվում է մարտական պատրաստվածության վիճակի, զրահատեխնիկայում պայմանականորեն տեղակայված անձնակազմի կենդանի մնալը խոցման դեպքում հավասար է զրոյի։ Համակարգի հրթիռը թիրախավորում է նշանակետն ինքնուրույն, և օպերատորի կողմից մինչև խոցման պահը թիրախի ուղղորդում չի պահանջվում. ընդ որում՝ թիրախը կխոցվի նույնիսկ եթե արձակումից հետո այն անհետանա օպերատորի տեսադաշտից։

2013թ. պաշտոնական Բաքուն պատվիրել էր իսրայելական կողմին (արտադրող կողմը՝ *RAFAEL* ընկերություն, այլ իսրայելական պաշտպանական ընկերությունների հետ համատեղ) շուրջ 250 միավոր *Spike NLOS* (*«Non Line Of Sight»*, «տեսանելիության սահմաններից դուրս») տեսակի իսրայելական արտադրության բազմանպատակային էլեկտրաօպտիկական հակատանկային հրթիռային համակարգեր (ՀՏՀՀ)։ Ըստ տարբեր աղբյուրների, ադրբեջանական կողմն արդեն 2014-2015թթ. ձեռք բերեց շուրջ 80 միավոր ՀՏՀՀ։

Այս հրթիռային համակարգերը նախատեսված են զրահատեխնիկայի, պաշտպանված օբյեկտների և ինժեներական կառույցների, ինչպես նաև թշնամու մարդկային ուժի ոչնչացման համար: Համակարգը կարող է տեղակայվել օդային, ծովային կամ ցամաքային համապատասխան կրող տեխնիկայի վրա: Հարկ է նշել, որ *Spike NLOS*-ը կարող է թիրախավորել տվյալ նշանակետը ԱԹՍ-ի կամ արբանյակի միջոցով, կրում է թիրախավորման ֆիքսման սեփական համակարգ, ունի հեռակառավարման համակարգ, որն իրականացվում է պատկերի փոխանցման երկկողմանի էլեկտրաօպտիկական համակարգի միջոցով, ինչն էապես մեծացնում է համակարգի մարտական կիրառության հնարավորությունները: Էլեկտրաօպտիկական կառավարման համակարգը հնարավորություն է տալիս ընտրել թիրախը, ստանալ հետախուզական տվյալներ և հստակեցնել թիրախը, հեռահար տարածության վրա հասնել գերճշգրիտ թիրախավորման արդյունքների: 2011թ. այս համակարգի 1 հրթիռի արժեքը գնահատվում էր $145 հազ.: Համակարգն առավել արդյունավետ կիրառվում է մինչև 25 կմ հեռահարության վրա:

Վերջին տարիներին Т-72 «Ասլան» տեսակի տանկերն արդիականացվել են իսրայելական *Elbit Systems* պաշտպանական ընկերության կողմից: Տանկերի վրա տեղադրվել են կրակի կառավարման համակարգ, *GPS* բազայի նավիգացիոն համակարգ, ջերմատեսանելիության սարքեր: Տեսադիտարկման համակարգերը թույլ են տալիս մարտական գործողություններ իրականացնել ցանկացած կլիմայական պայմաններում, ինչպես նաև գիշերային ժամերին:

Տարբեր աղբյուրների համաձայն՝ 2012թ. Ադրբեջանն Իսրայելից և մասնավորապես *Israeli Aerospace Industries* (*IAI*) կորպորացիայից ձեռք բերեց $1,6 մլրդ արժողության ԱԹՍ-ներ և նորագույն ՀՕՊ համակարգեր: Համաձայն ստորագրված վերոնշյալ պայմանագրի՝ նախատեսվում էր նաև իսրայելցի համապատասխան մասնագետների այցն Ադրբեջան՝ տեղի ուժայիններին համակարգերի աշխատանքների հետ ծանոթացնելու և ուսուցանելու նպատակներով: Նշվում էր, որ 2012թ. ադրբեջանական կողմը կսկսի *Aerostar* և *Orbiter-2M* տեսակի ԱԹՍ-ների արտադրությունը: Վերջինների արտադրությամբ զբաղվելու էր *Baku's Azad Systemc Co.* ընկերությունը, որը հիմնադրվել էր Ադրբեջանի և Իսրայելի կառավարությունների միջև ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում:

Ադրբեջանի պաշտոնական աղբյուրների համաձայն՝ 2012թ. նախատեսվում էր արտադրել շուրջ 60 ԱԹՍ: Նշենք նաև, որ 2012թ. սկզբին լուրեր տարածվեցին նաև, որ *IAI* իսրայելական կոնցեռնը հիմնել է ԱԹՍ օպերատորների ակադեմիա, որտեղ կարող են ուսանել ինչպես Իսրայելի պաշտպանության բանակի, այնպես էլ այլ երկրների, այդ թվում և Ադրբեջանի ԶՈՒ ներկայացուցիչները: Մինչ այդ՝ 2008թ. կեսին, լուրեր տարածվեցին այն մասին, որ ադրբեջանական կողմը նախատեսում է իսրայելական *Silver Arrow* պաշտպանական ընկերությունից ձեռք բերել 10 միավոր բազմանպատակային հետախուզական *Hermes-450* տեսակի ԱԹՍ, որոնք նախատեսված են դիտարկման, հետախուզության ու կրակի աջակցման ճշգրտման, ինչպես նաև մարտական գործողություններում հաղորդակցությունների աջակցման նպատակներով:

Ժամանակին Ադրբեջանը, վերը հիշատակված ԱԹՍ տեսակից բացի, ձեռք էր բերել նաև իսրայելական արտադրության *Harop* տեսակի ԱԹՍ, որը «ինքնասպան» ԱԹՍ է: Նկատենք, որ այս տեսակն առաջին անգամ մարտական գործողություններում կիրառվել է ապրիլյան պատերազմում: Այս ԱԹՍ-ն հետախուզական-հարվածային տեխնիկա է, որն արտադրել է իսրայելական խոշոր պաշտպանական *Israel Aerospace Industries* (*IAI*) ընկերությունը, ինքնուրույն է գտնումը թիրախը և ոչնչացնում այն: Ցամաքային թիրախների ուղղությամբ հարձակման համար ԱԹՍ-ն ունի 15 կիլոգրամանոց մարտագլխիկ, օդում այն կարող է մինչև 6 ժամ փնտրել թիրախը: Այս ԱԹՍ-ն կարող է օդում կիրառվել մեծ բարձրությունների վրա, ինչը հնարավորություն է տալիս ընդլայնել տեսադաշտը և նվազեցնել տեսանելի դառնալու հավանականությունը: Թիրախի հայտնաբերմամբ այն ընկնում է թիրախի վրա և ոչնչանում նրա հետ միասին: Թիրախը չհայտնաբերելու պարագայում ԱԹՍ-ն վերադառնում է մեկնակետ: Կարող է ղեկավարվել հեռվից կամ էլ թիրախավորվել ինքնուրույն՝ սեփական ռադարի օգնությամբ: *Harop*-ը արդյունավետ միջոց է հակառակորդի ՀՕՊ համակարգերի դեմ պայքարելու համար, քանի որ դրա փոքր չափսերը հնարավորություն են տալիս խուսափել ցամաքային ռադարների կողմից հնարավոր հայտնաբերվելուց: Ի դեպ, այս մոդելը մեկ այլ՝ *Harpy* տեսակի ԱԹՍ կատարելագործված տարբերակն է, որը հեռակառավարման հնարավորություն չուներ:

Harop-ը մշակվել է 2001-2005թթ.: ԱԹՍ-ն առաջին փորձնական թռիչքն իրականացրել է 2003թ. աշնանը Նեգևի անապատի ռազմական օդանավակա-

յանում: Առաջին անգամ *Haropy*-ը ներկայացվել է 2009թ. *Aero-India* ռազմարդյունաբերական ցուցահանդեսին: ԱԹՍ թռիչքի հեռավորությունն ավելի քան 1000 կմ է, արագությունը՝ 185 կմ/ժ, քաշը՝ 135 կգ:

Այսօր դժվար է միանշանակ ասել, թե որ երկրներն են զինված իսրայելական *Harop* տեսակի նորագույն ԱԹՍ-ներով: Տարբեր աղբյուրների համաձայն՝ դրանք նկատվել են Ուկրաինայում և Սիրիայում: Միայն կարել է հաստատել, որ 2015թ. հունիսին, ինչպես հայտարարեց *Israel Aerospace Industries* պաշտպանական ընկերությունը, որը զբաղվում է դրանց արտադրությամբ, տարբեր պատվիրատուների վաճառվել են հարյուրավոր նման համակարգեր, և որ այս դրոններն ունեն սպառման մեծ պոտենցիալ:

Այսօր կարելի է հաստատապես ասել, որ ԱԹՍ-ները դարձել են ներկա ռազմական հակամարտությունների, մարտական գործողությունների անբաժանելի մասը, ամբողջ տեղեկատվությունը, հետախուզության ողջ սպեկտրը գալիս է գերազանցապես ԱԹՍ-ների օգնությամբ: ԱԹՍ-ները, ինչպես նշում են ռազմական ոլորտի ներկայացուցիչները, փորձագետներն ու զինվորականները, առաջիկա 10-15 տարում սպառազինությունների համակարգերի զարգացման հիմնական միտումներից են:

Այս և սպառազինության այլ տեսակներ ներկայացված էին Բաքվում 2014թ. սեպտեմբերի 11-13-ին անցկացված *ADEX-2014* առաջին ադրբեջանական միջազգային պաշտպանական արդյունաբերության ցուցահանդեսին, որի կազմակերպումը «համընկավ» Իսրայելի պաշտպանության նախարար Մոշե Յաալոնի Ադրբեջան կատարած առաջին այցելության հետ (ինչը ևս խորհրդանշական էր և խոսում էր երկու երկրների միջև ռազմական, ռազմատեխնիկական համագործակցության խորացման միտումների մասին): Խնդիրն այն է, որ ցուցահանդեսին ներկայացված էին նաև իսրայելական պաշտպանական առաջատար ընկերությունների արտադրանքն ու սպառազինությունները:

ADEX-2014 ցուցահանդեսին Ադրբեջանի պաշտպանության նախարար Յավեր Ջամալովը հանդես եկավ հայտարարությամբ այն մասին, որ 2013թ. ռազմական նշանակության ադրբեջանական արտադրանքների արտահանումների ծավալը կազմել է շուրջ $123 մլն: Նրա խոսքերով՝ 2013թ. ադրբեջանական արտադրության սպառազինության հիմնական գնորդներն են եղել Թուրքիան, Բելառուսը, Ռուսաստանը:

Ադրբեջանն իրականացնում է նաև իր երկրում համատեղ արտադրված ԱԹՍ-ների արտահանում: Պաշտոնական տվյալների համաձայն՝ 2014թ. Ադրբեջանն արտահանել է 100 միավոր ԱԹՍ ՆԱՏՕ անդամ երկրներից մեկը. պայմանագրի մեջ ներառվում էր *Orbiter-2M* և *Aerostar-BP* տեսակի ԱԹՍ: Դրանք երկուսն էլ իսրայելական խոշոր պաշտպանական *Aeronautics Defense Systems, Ltd.* ընկերության արտադրանքն են: Այս սարքերն արտադրում է Ադրբեջանի պաշտպանության նախարարության և իսրայելական ընկերության կողմից Բաքվում ստեղծված *Azad Systems* համատեղ ձեռնարկությունը:

2014թ. Ադրբեջանի պաշտպանական արդյունաբերության նախարարության օպտիկա-մեխանիկական արտադրական միավորման «Ալով» գործարանում արտադրվում է 14 տեսակ պաշտպանական արտադրանք՝ օպտիկական ցերեկային նշանացույցեր, գիշերային տեսանելիության նշանացույցեր, ջերմատեսանելիության նշանացույցեր, նշանացույցեր հրաձգային 3 զինատեսակների համար: Արտադրվում են նաև ցերեկային-գիշերային տեսանելիության օպտիկական նշանացույցեր, որոնք նախատեսված են նռնականետերի համար:

Գործարանի ներկայացրած պաշտպանական նշանակության արտադրանքում զգալի է իսրայելական ընկերությունների մասնակցությունը: Գործարանը պատվիրատուներ ունի՝ ի դեմս թուրքական *ASELSAN* ընկերության, ՌԴ-ի, Ռումինիայի, Բելառուսի, Իրանի, Իսրայելի և այլ երկրների:

Պաշտոնական տվյալներով՝ գործարանը 2014թ. պատվերներ ուներ նաև հրաձգային զենքի համար նախատեսված ջերմատեսանելիության սարքերի արտադրության ոլորտում, որոնք նախատեսում էր արտադրել թուրքական *ASELSAN* ընկերության աջակցությամբ:

Տարբեր գնահատականներով՝ Ադրբեջանի ՀՕՊ ուժերը գրեթե 1/3 մասով համալրված են իսրայելական արտադրության ռազմական տեխնիկայով: Հատկապես ուշագրավ են իսրայելական արտադրության *Barak-8* (եբրայերենից թարգմ.՝ կայծակ) տեսակի զենիթահրթիռային համալիրը և «Երկաթյա գմբեթ» (եբր.՝ Կիպատ բարզել) տեսակի հակահրթիռային պաշտպանության համակարգը:

Ըստ որոշ գնահատականների՝ 1 միավոր *Barak-8* տեսակի զենիթահրթիռային համակարգը $25 մլն արժե. այս համակարգից Ադրբեջանն ունի շուրջ 1 տասնյակ միավոր:

Առավել բարձր է հատկապես «Կիպատ բարզել» համակարգի արժեքը, որն օդային տարածքի պաշտպանության նորագույն համակարգերից է: Ադրբեջանական կողմն ունի 1 տասնյակ միավոր «Կիպատ բարզել», որի ձեռքբերման և տեղադրման մասին պայմանավորվածությունը ստորագրվել է 2013թ.:

«Երկաթյա գմբեթը» հակահրթիռային պաշտպանության տակտիկական համակարգ է, նախատեսված է 4-70 կմ թռիչքային հեռավորությամբ չկառավարվող տակտիկական հրթիռներից պաշտպանվելու, ինչպես նաև մինչև 10 կմ բարձրության վրա ինքնաթիռների, ուղղաթիռների, ԱԹՍ-ների և բարձր ճշգրտությամբ կառավարվող տեխնիկայի դեմ պայքարելու համար: Համակարգը մշակվել է իսրայելական *RAFAEL* և *Israel Aerospace Industries* պաշտպանական ընկերությունների կողմից 2005թ.: Շահագործման է հանձնվել 2011թ.: Համակարգի յուրաքանչյուր մարտկոց, որի արժեքը $50 մլն է, կարող է պաշտպանել 150 քռ/կմ տարածք[6]:

Barak տեսակի իսրայելական զենիթահրթիռային համալիրը նույնպես նախագծվել և արտադրվել է *RAFAEL* և *Israel Aerospace Industries* պաշտպանական ընկերությունների կողմից: *Barak-8* ՀՕՊ համակարգը ցամաքային համալիր է, նախատեսված է օդային սպառնալիքների, այդ թվում՝ ԱԹՍ-ների, թևավոր հրթիռների, ցամաք-ցամաք տեսակի հրթիռների լայն սպեկտրի հայտնաբերման և ոչնչացման համար՝ անկախ կլիմայական պայմաններից և օրվա յուրաքանչյուր ժամին:

Համալիրը կարող է պայքարել մինչձայնային և գերձայնային օդային թիրախների դեմ՝ տարբեր բարձրությունների ու հեռավորության վրա: Սկզբում այն նախատեսված չի եղել հակահրթիռային պաշտպանության համար, սակայն կարող է իրականացնել տակտիկական բալիստիկ հրթիռների խոցման գործողություններ:

Ըստ ԶԼՄ տեղեկատվության՝ 2000-ականների կեսերին ադրբեջանական կողմը ձեռք բերեց իսրայելական արտադրության 160 մմ-անոց տրամաչափի *LAR-160* տեսակի համազարկային կրակի ռեակտիվ համակարգի (ՀԿՌՀ) 6 միավոր (որոշ լրատվական աղբյուրներ նշում են 10-ից ավելի միավոր): Համակարգը մշակվել է իսրայելական *Israel Military Industries* պաշտպանական ընկերության կողմից 1970-ականների վերջին և համալրել Իսրայելի ԶՈՒ

[6] https://ru.wikipedia.org/wiki/%D0%96%D0%B5%D0%BB%D0%B5%D0%B7%D0%BD%D1%8B%D0%B9_%D0%BA%D1%83%D0%BF%D0%BE%D0%BB

սպառազինությունը 1980-ականների սկզբին: Համակարգի արձակած կրակի նվազագույն հեռավորությունը 7000-8000 մ է, առավելագույն հեռավորությունը՝ մինչև 45000 մ:

Ադրբեջանից բացի, իսրայելական արտադրության այս համակարգով համալրված են նաև Արգենտինայի, Վենեսուելայի, Վրաստանի, Ռուանդայի, Չիլիի ԶՈՒ-երը:

Ներկայում *Israel Military Industries* պաշտպանական ընկերությունն իրականացնում է *LAR-160* ՀԿՌՀ արդիականացման այլ տարբերակ. մեծացվում է կրակի արձակման հեռավորությունը, մշակվում են «կասետային մարտագլխիկներ» (հայտնի է *DRADLAR* անվամբ): Մշակվել է նաև այս համակարգի ծովային տարբերակը՝ *NAVLAR*, որը կարող է տեղադրվել փոքր նավերի վրա: Նախագծերից մեկում նախատեսվում է LAR-160 ՀԿՌՀ հրետանային մասը կիրառել 2 չկառավարվող 350 մմ-անոց տրամաչափի ռեակտիվ հրթիռների արձակման համար, որոնք ունեն մինչև 80 կմ կրակի հեռավորություն[7]:

Իսրայելական *Haaretz* թերթի տեղեկատվության համաձայն՝ վերջին 4 տարիներին Ադրբեջանն Իսրայելից ձեռք է բերել $5 մլրդ ընդհանուր արժողության սպառազինություն[8]:

Ջենքի համաշխարհային առևտրի վերլուծության կենտրոնի տարեգրքի տվյալների համաձայն՝ 2009-2016թթ. Ադրբեջանն Իսրայելից ձեռք է բերել 110 միավոր *Aerostar, Hermes-450, Heron-1, Orbiter-2M* տեսակի ԱԹՍ-ներ, ինչպես նաև *Barak-8* տեսակի զենիթահրթիռային համալիր՝ 9 միավոր (2016թ.), *EL/M-2080 Green-Pine* տեսակի ՀՕՊ ՌԼԿ (ռադիոլոկացիոն կայան)՝ 2 միավոր (2015թ., 2016թ.), տանկեր, ՀՄՄ-ներ (հետևակի մարտական մեքենա), ականանետեր և այլն[9]:

2010-2011թթ. ադրբեջանական կողմը ձեռք է բերել իսրայելական արտադրության 10 միավոր *CARDOM* (*Computerised Autonomous Recoil rapid Deployed Outrange Mortar*) 120 մմ ինքնագնաց ականանետեր (*Soltam K6* տեսակի ականանետեր): Ականանետային այս համակարգի արտադրությունը սկսվել է 2000-ականների սկզբին *Soltam Systems* ընկերության կողմից, որը հետագայում կազմեց *Elbit Systems* կազմակերպության մի մասը:

[7] http://rbase.new-factoria.ru/missile/wobb/lar160/lar160.shtml
[8] http://vognebroda.net/izrail-prodolzhaet-podderzhku-azerbaydzhana
[9] http://russia-armenia.info/node/28337

Համալիրը կարող է տեղակայվել տարբեր տեսակի զրահատեխնիկայի մարտական հատվածում: Ականանետային այս համալիրի մարտական առավելություններից առանձնացվում է հարթակի պտտման հնարավորությունը, ինչը թույլ է տալիս կրակ վարել բոլոր ուղղություններով: Կարևոր առանձնահատկություններից է կրակի կառավարման թվայնացված համակարգի առկայությունը, ինչը թույլ է տալիս առավել ճշգրիտ հարվածներ հասցնել[10]:

Երկու երկրների միջև ռազմական համագործակցությունը չի սահմանափակվում սպառազինության մատակարարումներով: Իսրայելական կողմը զգալի աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանի ԶՈՒ սպայական կազմի վերապատրաստման և մասնագիտական հմտությունների կատարելագործման, ինչպես նաև իսրայելցի ռազմական ներկայացուցիչների կողմից պաշտպանական նշանակության ծառայությունների մատուցման ուղղությամբ, ինչը երկու երկրների ռազմական համագործակցության կարևոր բաղկացուցիչներից է: Դրա մասին է վկայում նաև այն, որ ապրիլյան պատերազմի ընթացքում հակառակորդի կիրառած ԱԹՍ-ները հեռակառավարվում էին հենց իսրայելցի մասնագետների կողմից:

2008թ. բանակցություններ էին ընթանում Իսրայելի և Ադրբեջանի միջև ռազմական համագործակցության խորացման ուղղությամբ, խոսվում էր Ադրբեջանում իսրայելցի ռազմական հրահանգիչների կողմից վերապատրաստման հնարավոր դասընթացների կազմակերպման մասին: Այս քննարկումները 2011թ. սկսած գործնական կիրառություն ստացան, ինչի արդյունքում իսրայելցի հրահանգիչները սկսեցին մասնակցել ադրբեջանցի զինծառայողների ուսուցման, վերապատրաստման գործընթացներին, ինչը նոր լիցք հաղորդեց երկու երկրների միջև ռազմական, ռազմատեխնիկական համագործակցության զարգացմանը:

Ստորև ներկայացնում ենք Ստոկհոլմի խաղաղության հետազոտման միջազգային ինստիտուտի (*SIPRI*) տվյալներն Իսրայել-Ադրբեջան ռազմատեխնիկական համագործակցության վերաբերյալ:

[10] http://topwar.ru/43086-minometnyy-kompleks-cardom-izrail.html

Գրաֆիկ 1

Իսրայելական սպառազինության մատակարարումներն Ադրբեջանին

Մատակարար	Անվանում	Ցինատեսակ	Պատվեր/ քանակ	Պատվեր	Առաքում	Առաքում/ քանակ	Մեկնաբանություն
Ադրբեջան	Aerostar	ԱԹՍ	10	2010	2011-2012	10	ԱԹՍ-ի մասեր
Իսրայել	LAR-160	ՀԿՈՒՀ	6	2005	2006	6	Համազարկային կրակի ռեակտիվ համակարգ
	EXTRA	Հրթիռ	50	2005	2008-2009	50	LAR-160-ի հրթիռ
	Aerostar	ԱԹՍ	4	2007	2008	4	
	ATMOS 2000	ԻՀԿ	5	2008	2010	5	155 մմ ինքնագնաց հրետանային կայանք
	CARDOM	ԻԱ	10	2008	2010-2011	10	120 մմ ինքնագնաց ականանետ
	Hermes-450	ԱԹՍ	10	2008	2011-2013	10	
	Spike-LR	ՀՏՀՀ	100	2008	2009-2010	100	Հակատանկային հրթիռային համակարգ
	Sufa	Ամենագնաց	10	2008	2009-2010	10	
	Barak 8	Հրթիռ	1	2011			Հակաօդային հրթիռ/ 1,6 մլրդ դլ զործարքի մաս
	Barak 8	Հրթիռ	75	2011			
	EL/M-2080 Green Pine	Ռադար	2	2011			1,6 մլրդ դլ զործարքի մաս
	Heron	ԱԹՍ	5	2011	2013	5	
	Searcher	ԱԹՍ	5	2011	2013	5	1,6 մլրդ դլ զործարքի մաս
	LAHAT	ՀՏՀ		2013			Հակատանկային հրթիռ
	OPV-62	Պահականավ	6	2013	2015	1	Կառուցվել է Ադրբեջանում
	Shaldag	Պահականավ	6	2013	2014-2015	6	Կառուցվել է Ադրբեջանում
	Spike-NLOS	ՀՏՀՀ	250	2013	2014-2015	80	OPV-62-ի եւ Shaldag-ի համար
	EL/M-2288 AD-STAR	Ռադար		2014			

Աղբյուրը՝ http://hetq.am/arm/news/67136/inchpes-e-israyely-zinum-adrbejanin.html

Հետևություններ

Իսրայել-Ադրբեջան ռազմական, ռազմատեխնիկական համագործակցության ներկա միտումները ցույց են տալիս, որ երկկողմ համագործակցությունն այս ոլորտում ունի զարգացման մեծ պոտենցիալ և առաջիկա տարիներին կբնորոշվի առավել դինամիկ գործընթացներով: Երկու երկրների միջև ռազմական, ռազմատեխնիկական համագործակցության խորացմանն էապես կնպաստի ս.թ. մայիսին Ավիգդոր Լիբերմանի՝ Իսրայելի պաշտպանության նախարարի պաշտոնում նշանակվելու հանգամանքը: Նորանշանակ նախարարը արցախյան համակարտության կարգավորման հարցում բազմիցս է հանդես եկել ադրբեջանամետ հայտարարություններով:

Կարելի է հաստատել, որ Լիբերմանի՝ Իսրայելի պաշտպանության նախարարի պաշտոնին նշանակումը Իսրայել-Ադրբեջան երկկողմ հարաբերությունները և, մասնավորապես, ռազմական, ռազմատեխնիկական համագործակցությունը կբերի որակապես նոր մակարդակի, ինչը չի կարող չանդրադառնալ արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի վրա:

Ամենևին պատահական չէր, որ ապրիլյան պատերազմից հետո չուշացավ Լիբերմանի՝ այդ պաշտոնին նշանակման որոշումը. սա պետք է պայմանավորել ապրիլյան ռազմական գործողություններից հետո Իսրայելի օրենսդիր և գործադիր մարմիններում թուրք-ադրբեջանական լոբբինգի կտրուկ ակտիվացման իրողության հետ, ինչն էական ազդեցություն ունեցավ Լիբերմանի նշանակման որոշման վրա։

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

Նշումների համար

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 21.07.2016թ.
Թիվ 5 (74), 2016թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում